



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4094

93776

US6LL6







476  
ԳԵՌԻՆ.

# ՍՏԵԼԼԱ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Հինգ գործողութամբ

◆◆◆

Թարգմ. Գերմանեյեցից

ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

◆◆◆

ՎԱՂԱՐՇԱՊՈՍ

ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԵԱՆՆԻ.

1902

83

Գ-66



33

66

28 JUN 2005

02 NOV 2009

Գ Ե Օ Թ Է.

# Ս Տ Ե Լ Լ Ա.

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Խ Թ Ի Խ Ն

Հինգ գործողութեամբ



Թարգմ. Գերմաներենից


ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԵԱՆԻ.

1902





20 1913

4094

Дозволено Цензурою 21 Декабря 1911 г. г. Тифлисъ.



9683-73



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Սեկա.

Յիցիլիէ. սկզբում՝ սիկիւն Զումմէր  
անունով.

Լուցիէ

Քերնանդօ.


Կառավարիչ.

Լուդա. Պոստատիրունի

Աճճիւէն.

Կարլ.

Ծառաներ.



ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ՊՈՍՏԱՏՈՒՆ

Լուումէ սուրհանգակի սուլոցը

ԼՈՒԴԱ.

Լուդա. Կճրլ, Կճրլ

Կարլ. ինչ կայ

Էլի սը ես կորել. գնա դուրս. Պոստը  
գալիս է: Եկւորներին ներս առաջնորդելը.  
ցած բեր նոցա ճանապարհորդական իրերը.  
գէն, շարժուիր: Էլի ինչ ես երեսդ ծովուում.  
(Կարլը հեռանում է. նրա ետեւից) Սպասիր,  
քո ծուլութեանդ վերջ կը գնեմ: Պանդակի  
ժառան պէտք է միշտ ուրախ և աշխոյժ լի-  
նի: Երբ քեզ պէս յիմարը պարոն դառնայ,  
ամեն բան կը փչացնէ: Եթէ ես երկրորդ  
անգամ ամուսնանալ եմ ցանկանում, այդ  
միայն նրա համար է, որ միայնակ շատ  
գժուար է կառավարել:



Տիկին Զոմմեր, Լուցիէ Գանապարհորդական  
տուրում. Կարլ

Լուցիէ. (Ձեռնին մի պայուսակ, ղի մե-  
լով Կարլին) Թողէք դա ինձ, շատ ծանր չէ.  
ես կը բերեմ. դուք մայրիկիս օգնեցէ՛ք  
միայն, վերցնելով նրա արկղիկը:

Լուդա. Պատրաստ եմ Ձեզ ծառայե-  
լու. Շատ յարմար ժամանակ էք եկել. ոչ  
մի օր կառքը այսքան վաղ չէ հասել:

Լուցիէ. Իրա պատճառն այն էր, որ  
մեզ հետ էր բոլորովին երիտասարդ, ու-  
րախ, գեղեցիկ մի սուրհանդակ, որի հետ  
ես ուրախութեամբ ամբողջ աշխարհը կը  
քննէի. և բացի դրանից կառքը շատ ծա-  
նրաբեռնուած չէր, մենք երկու հոգի էինք:

Լուդա. Եթէ ցանկանում էք ճաշել  
պէտք է մի քիչ սպասէք, որովհետև ճաշը  
դեռ պատրաստ չէ:

Տ. Զոմ. Կարող եմ արդեօք ձեզանից  
մի քիչ սուս խնդրել.

Լուցիէ. Ես ամենևին չեմ շտապում.  
դուք միայն շտապեցէ՛ք մայրիկիս համար:

Լուդա. Իսկոյն.

Լուցիէ. Միայն մտաշուրք լաւը լինի.

Լուդա. Առանց այդ էլ լաւ կը լինի

(զնում է):

Տ. Զոմմեր. Ի՞նչ քո պատուէրներդ. որ  
չես թողնում: Ես կարծում էի, թէ այս  
ճանապարհորդութեան միջոցին դու խելքի  
եկած կը լինիս: Մենք միշտ աւելի շատ ենք  
վճարում, քան որ իսկապէս պէտք էր. և  
այն էլ այսպիսի սուղ պայմաններում:

Լուցիէ. Մենք մինչև այժմ դեռ ոչ մի  
բանի նեղութիւն չենք քաշել

Տ. Զոմ. Բայց շատ մօտ ենք այդ վի-  
ճակին:

Սուրհանդակը ներս է մտնում.

Լուցիէ. Հը, եկ՛՛ք. ինչ կայ, երևի ձեռ-  
նաձրի համար ես գալիս.

Սուրհան. Չէ որ, արտաքոյ կարգի ա-  
րագութեամբ բերի ձեզ:

Լուցիէ. Ուզում ես տեսլ, որ արտաքոյ  
կարգի վարձի ես արժանի: Եթէ ես ձիեր  
ունենայի, անպատճառ քեզ իմ անձնական  
կառապանը կանէի:

Սուրհան. Առանց ձիերի էլ պատրաստ  
եմ ծառայելու.

Լուցիէ. Լաւ, վեր առ.

Սուրհան. Շնորհակալ եմ. Չէք շարու-



նակելու ձեր ճանապարհը.

Լուցիէ. Այս անգամին այստեղ կը մը-  
նանք:

Սուրհան. Մնաք բարով. (գնում է).

Տ. Զում. Երեսիցդ յայտնի է, որ աւելի  
տուիր նրան.

Լուցիէ. Ինչ է, ուզում էիր որ նա  
տրանջալով հեռանար մեզանից: Նա մեզ  
հետ ինչպէս ուրախ էր ամբողջ ճանապար-  
հին: Դուք միշտ ասում էիք ինձ, մայրիկ,  
որ ես յամառ եմ, այժմ դոնէ ժլատ չէք  
անուանի ինձ:

Տ. Զում. Խնդրում եմ, Լուցիէ, որ իմ  
ասածները ճիշտ հասկանաս: Ես սիրում եմ,  
ինչպէս քո պարզութիւնը, նոյնպէս և քո  
բարի վարքն ու առատաձեռնութիւնը: Բայց  
այդ առաքինութիւններն իրանց տեղն ու-  
նեն:

Լուցիէ. Այս տեղն ինձ շատ դուր է  
գալիս, մայրիկ, ահա այդ տունը-թերևս այն  
տիրուհուն է պատկանում, որի շրջանում  
ես պէտք է ապրեմ:

Տ. Զում. Շատ ուրախ եմ, որ քեզ հա-  
մար որոշած տեղը քեզ դուր է գալիս:

Լուցիէ. Ինձ թւում է, որ այստեղ  
շատ խաղաղ է լինում. Մեծ հրապարակը

այնպէս լուսաւոր է, կարծես տօն լինի: Այդ  
տիրուհին մի գեղեցիկ այգի ունի և, երե-  
ւում է, որ լաւ կին է: Տեսնենք նրա հետ  
ինչպէս կը համաձայնուենք:— Բայց ինչու  
այդքան անհանդատութեամբ այս ու այն  
կողմն էք նայում, մայրիկ:

Տ. Զում. Թո՛ղ, Լուցիէ, դու բազդաւոր  
ես, որ քո մէջ չեն դարթնում հին յիշո-  
ղութիւններ. այդպէս չէր առաջ. ինձ հա-  
մար չկայ աւելի վշտահար բան, քան մի որ  
և է պոստատուն մտնելը

Լուցիէ. Դուք միշտ աշխատում էք մի  
բան գտնել ձեզ չարչարելու:

Տ. Զում. Եւ ոչ մի տեղ չի պակասում  
այդպիսի առիթ: Սիրելիս, ինձ համար բոլո-  
րովին ուրիշ էին այն ժամանակները, երբ  
քո հօր հետ ճանապարհորդում էինք, երբ  
մեր ամուսնութեան առաջին տարիները, մեր  
կեանքի ամենաերջանիկ ժամանակը ազատ  
աշխարհում էինք անց կացնում: Այն ժա-  
մանակ իմ մէջ ամեն բան նորութեան գըր-  
դիւ էր յառաջացնում: Նրա հետ միասին  
նրա դրիկ մէջ սրբան ինձ քաղցր էր նայել  
կեանքի ամենափոքր բաների վրայ: Մենք  
հոգւով ու սիրով միացած էինք իրար հետ:

Լուցիէ. Ես էլ սիրում եմ ճանապար-



հորդելէ:

Տ. Զում. Եւ երբ մի աղակարար օր ամեն տեսակ դժուարութիւններից յետոյ այս կայարանից էլ վատ մի պոստատուն մտանք, մենք զգացինք միասին ամենահասարակ կեանքի յարմարութեան բուն վայելքը, թէպէտ և փայտեայ նստարանների վրայ էինք նստել և ձուածեղ և գետնախնձոր էինք ուտում: Այն ժամանակներն անցան ...

Լուցիէ. Արդէն ժամանակէ այդ մտաւ նալու.

Տ. Զում. Մոռանալ ... գիտե՞ս այդ ինչ է նշանակում: Սիրելի աղջիկս, փառք Աստուծոյ, որ դու կեանքումդ ոչինչ այնպէս բան չես կորցրել, որ կարելի չլինէր մի ուրիշ բանով փոխարինել: Այն վարկեանից ի վեր, երբ համոզուեցայ, որ նա ինձ թողել է, իմ կեանքի ուրախութիւնն անցաւ: Տիրեց ինձ յուսահատութիւնը: Ես կասկածում էի իմ և Աստուծոյ գոյութեան վրայ: Ես հազիւ եմ կարողանում այն ժամանակուայ դրութիւնս մտաբերել:

Լուցիէ. Ես ևս աւելի բան չգիտեմ, բան այն, որ ձեր անկողնի վրայ ընկած լալիս էի, որովհետեւ դուք էլ լալիս էիք: Այդ կանաչ սենեակումն էր, փոքրիկ ան-

կողնի վրայ: Երբ մենք տունը ծախեցինք, ամենից ծանր էր ինձ բաժանուել այդ սենեակից:

Տ. Զում. Այն ժամանակ դու դեռ 7 տարեկան էիր և չէիր կարող հասկանալ, թէ ինչ ես կորցնում:

Աճճիւհէն սուպով ամանը ձեռքից. Լուդա. Կարլ.

Աճճիւհէն. Ահա, տիկին, ձեր պատուիրած սուպը.

Տ. Զում. Ծնորհակալ եմ սիրելիս:— Սա ձեր աղջիկն է

Լուդա. Այն, տիրուհի, դա իմ խորթ աղջիկս է, սակայն այնքան բարի և խելացի է, որ հարազատ դաւակից չեմ զանազանում:

Տ. Զում. Այդ ինչ է, դուք սգոյ շորեր էք հագել:

Լուդա. Մարդուս համար սուգ եմ պահում. նա մեռաւ 3 ամիս առաջ. մենք երեք տարի էլ միասին չապրեցինք

Տ. Զում. Սակայն արդէն մխիթարուած էք երևում:

Լուդա. Օ՛, տիկին մենք նոյնքան քիչ ժամանակ ունինք տխրելու, որքան և աղօ-



Թերու: Դա միայն կիւրակի և տօն օրերի  
գործ է: Երբ քահանան հաղիւ մի երես  
կարդացած է լինում կամ մահերգն սկսած,  
— կարլ, երկու անձեռնոց բեր և սեղանի այն  
ծայրն էլ ծածկիր:

Լուցիէ. Այդ դրսի տունն սևին է

Լուդա. Մեր տիրուհունն է. նա շատ  
սիրելի կին է:

Տ. Զում. Ես ուրախ եմ որ մի ծանօթ  
կնոջից հաստատուած եմ տեսնում այն,  
ինչ որ շատ հեռաւոր կերպով լսել եմ: Իմ  
աղջիկը նրա մօտ է մնալու այսուհետև:

Լուդա. Բաղդաւորութիւն եմ ցանկա-  
նում ձեզ, օրիորդ:

Լուցիէ. Ես կը ցանկանայի, որ ինձ ևս  
դուր դար այդ տիկինը:

Լուդա. Դուք մի արտասովոր ճաշակ  
ունեցած կը լինէիք, եթէ տիկնոջ մերձաւո-  
րութիւնը ձեզ դուր չգար:

Լուցիէ. Աւելի լաւ, որովհետև երբ  
մէկի հետ դործ ունենալ եմ ուղում, ցան-  
կանում եմ որ այդ իմ սրտովս ու կամբովս  
լինի. այլապէս բան դուրս չի գայ:

Լուդա. Լաւ, լաւ, յետոյ դրա մասին  
կրկին կը խօսենք. և այն ժամանակ դուք

կը տեսնէք, ես ճիշտ եմ ասում թէ ոչ Ով  
մեր այս շնորհալի տիրուհու մօտ է ապրում,  
նա բախտաւոր է: Եթէ իմ աղջիկը մի քիչ  
մեծանայ, պէտք է ուղարկեմ նրա մօտ մի  
քանի տարի ծառայելու: Նրա բարի վարքը  
աղջկանս ամբողջ կեանքի վրայ իւր ազդե-  
ցութիւնը կը թողնէ:

ԱճճԻՍԷՆ. Երանի թէ նրան տեսնէիք.  
նա այնքան սիրուն, այնքան սիրելի է: Ձեզ  
անհաւատալի է թւում այժմ, թէ ինչպիսի  
անհամբերութեամբ նա ձեզ սպասում է:  
Նա ինձ ևս սիրում է: Սրդեօք չէիք կամե-  
նայ դնալ նրա մօտ: Ես կարող եմ ձեզ ու-  
ղեկցել:

Լուցիէ. Պէտք է դեռ պատրաստուիմ  
և ճաշեմ:

ԱճճԻՍԷՆ. Մայրիկ, դնամ օրիորդի գա-  
լուտը յայտնեմ մեր տիրուհուն:

Լուդա. Գնա՛

Տ. Զում. Եւ ասա՛ նրան, որ ճաշից յե-  
տոյ անմիջապէս կը դանք:

ԱճճԻՍԷՆը գնում է.

Լուդա. Իմ աղջիկը չափից դուրս սո-  
վորել է նրա վրայ: Սակայն ճիշտն ասած,



այդ տիրուհին ազնուագոյնն է աշխարհքի  
 էակներէից: Նրա ամբողջ բաւականութիւնը  
 տղայոց հետ անց կացնելն է: Նոցա սովո-  
 րեցնում է աշխատել ու երգել: Նա շրջա-  
 պատել է իրան գեղջուկներով, նոցա վիճակը  
 բարելաւելու նպատակով: Այսպէս է վար-  
 ւում նա այն ժամանակից սկսած, երբ իւր  
 ամուսինն հեռացաւ: Անհասկանալի է, որ  
 սա, լինելով այնքան դժբախտ, միւսոյն ժա-  
 մանակ այդքան բարի և ուրախ է լինում:

Տ. Զում. Նա այրի չէ:

Լուդա. Աստուած գիտէ. մարդը Յ տա-  
 րի է, որ գնացել է և նրա մասին ոչ ոք  
 բան չգիտէ: Խեղճ տիրուհին նրան սիրում  
 էր ամեն բանից աւելի: Իմ ամուսինը, երբ  
 նրա մասին էր պատմում, երբէք չէր կա-  
 մենում ամենայն բան ասել: Սակայն ես էլ  
 հաստատ ասում եմ, որ ամբողջ աշխարհ-  
 քում այդպիսի սիրտ չկայ: Իւրաքանչիւր  
 տարի ամուսնու հրաժեշտի օրը նա փակ-  
 ւում է մենակ իւր սենեակում և ոչ ոքի  
 ներս չի ընդունում: Իսկ երբ սկսում է խօ-  
 սել նրա մասին, մարդ հոգով ցաւակցում է  
 այդ խեղճ տիրուհուն:

Տ. Զում. Խեղճ Տիրուհի.

Լուդա. Դրա մասին շատ են խօսում

Տ. Զում. Դուք ինչ էք կարծում:

Լուդա. Դժուար է մի բան ասել

Տ. Զում. Յատկապէս խնդրում եմ ...

Լուդա. Եթէ ինձ չէք մատնի, կը վրս-  
 տահանամ ձեզ պատմել: Արդէն ութ տա-  
 րի է մօտ, որ նոքա այստեղ են եկել ու  
 դնել այս ասպետական կալուածքը: Ոչ ոք  
 չէր ճանաչում նոցա: Նոցա անուանում էին  
 լով՝ ամուսնուն—պարոն, իսկ կնոջը—տիկին:  
 Պարոնին համարում էին մի սպայ, որ պա-  
 տերազմների մէջ արդէն անուն վաստակած  
 ու այդ կեանքից ձանձրացած, այժմ հան-  
 դըստութեան էր դիմում: Տիկինն այն ժա-  
 մանակ շատ մատաղահասակ էր, ոչ աւելի  
 քան 16 տարեկան և հրեշտակի պէս չքնադ:  
 Լուցիէ. Այժմ 24 տարեկան հաղիւ-  
 շինի:

Լուդա. Համեմատած իւր հասակի հետ,  
 նա շատ վշտեր է քաշել. նա մի զաւակ  
 ունէր, որ շուտով մեռաւ. նրա գերեզմանն  
 այդու մէջ է փշերով պատած: Ամուսնու  
 մեկնելուց յետոյ տիրուհին գերեզմանի մօտ  
 իւր համար մի մենարան շինել տուաւ և  
 ցանկանում էր շիրիմ կանգնել գերեզմանի  
 վրայ: Իմ մարդը բաւական հասակաւոր էր  
 և հեշտութեամբ չէր կարելի նրան յուզել:



տակայն նա ևս ամենից շատ սիրում էր պատմել այս ամուսինների բախտաւորութեան մասին, երբ նորա այստեղ միասին ապրում էին: Մարդ բոլորովին կը փոխուէր, ասում էր ամուսինս, երբ տեսնէր նոյս փոխադարձ սէրը:

Տ. Զում. Սիրտս շատ ցանկանում է տեսնել նրան

Լուդա. Բայց լսիր. ասում էին, թէ պարոնը շատ հեռաքրքիր սկզբունքներ ունէր, յամենայն դէպս նա չէր յաճախում եկեղեցի: Այն մարդիկ, որոնք ոչ մի կրօն չունեն, չեն ճանաչում միեւնոյն ժամանակ և Ասածուն, ուրեմն և ոչ մի կարգի և կանոնի նշանակութիւն չեն տալիս: Մի անգամ էլ լուր տարածուեցաւ, թէ պարոնը գնացել է, և այն գնալն էր, որ գնացայլ ևս չէ վերադարձել:

Տ. Զում. (ինքն իրան) Կարծես իմ կեանքիցս է պատմում:

Լուդա. Ամեն մարդ այդ մասին էր խօսում: Հէնց նոյն ժամանակ, սրանից երեք տարի առաջ, ես, որ մի ջահէլ կիւն էի, իմ Միքայելի հետ այստեղ եկայ: Սակայն դժուար էր այն ժամանակները մի հաստատ բան իմանալ, որովհետև իւրաքանչիւրը իւր

տեսակ էր բացատրում, ուրիշ տեսակ էր պատմում: Բայց ի հարկ է, ինձ չէք մատնի: Այդ պարոնը շատ ճարպիկը պէտք է եղած լինէր, որ տիկնոջ գլխից հանելուց յետոյ բաց է թողել. այդպէս են ասում մարդիկ: Երբ ջահէլ աղջիկը այդպիսի մի քայլ է անում, այնուհետև նա ստիպուած կը լինի ամբողջ կեանքում ապաշխարել:

Ա.Գ.Գ.ԽԷ.Գ. (ներս է մտնում) Տիրուհին շատ խնդրում է քեզ, որ գնանք. նա ուզում է ձեզ տեսնել և ձեզ հետ խօսել:

Լուցիէ. Այս շորերով չի կարելի գնալ նրա մօտ:

Լուդա. Ոչինչ, գնացէք. ես ձեզ հաստատ եմ ասում, որ նա դրա վրայ ուշադրութիւն չի դարձնի:

Լուցիէ. Ինձ կուզեկցես, սիրելիս.

Ա.Գ.Գ.ԽԷ.Գ. Մեծ ուրախութեամբ:

Տ. Զում. Լսիր Լուցիէ. (Լուդան գնում է) նրան ոչինչ չտեսա մեր ով լինելու մասին. քաղաքավարի եղիր նրա հետ:

Լուցիա. (ցած) Հոգ մի անէք. հայրս մի վաճառական էր, Ամերիկայում մեռել է և ահա միակ պատճառը մեր այս դրութեան: Տեսնում էք, ինչպէս հնարեցի իսկոյն (ըստօր) Չէիք ցանկանայ մի քիչ հան-



9683-73



գոտանալ, հանգստի պէտք ունէք. անշուշտ պանդօկապետուհին ձեզ մի սենեակ կըտայ անկողնով հանդերձ:

Լուդա. Այգու մէջ ես մի գեղեցիկ ու յարմարաւոր սենեակ ունեմ (Լուցիէին): Ես շատ ցանկանում եմ, որ տիրուհին ձեզ դուր գար:

(Լուցիէն ու Աննիսէնը գնում են).

Լուդա. Եթէ կը հաճեք համեցէք, տեղին. (երկուսն եւս դուրս են գնում. լսում է սուրհանդակի սուլոցը:)

Ֆերնանդօն սպայի համազգեստով. մի ծառայ.

Ծառան. Արդեօք կը ցանկանայիք, որ կառքը լծեմ և ձեր իրեղէնները դարսեմ վրան:

Ֆերն. Իմ իրեղէնները ներս բեր, ա սում եմ քեզ, ես այլ ևս առաջ չեմ գնալու. հասկան՞ում ես:

Ծառան. Ինչպէս, չէք շարունակելու այլ ևս.

Ֆերն. Ո՛չ, գնն մի սենեակ ուղիւր ինձ համար և իմ իրեղէններս տար ներս.

Ծառան գնում է.

Ֆերն. (պատուհանին մտնենալով). Ո՛ւ

րեմն դարձեալ իմ աչքի առաջ ես, երկնային պատկեր, կրկին ես քեզ տեսնում եմ, իմ երջանկութեան վայր: Ինչպէս խաղաղութիւն է տիրում ամբողջ տան մէջ: Ոչ մի պատուհան բաց չէ: Ինչպէս դատարկ, ամայի է ճեմելիքը, ուր մենք միասին յաճախ ման էինք գալիս. Լաւ նկատիր, Ֆէրնանդօ, նորա մենական կեանքի բնակարանը: Այդ ինչպէս շոյում է քո յոյսերը և միթէ այդ մենակութեան մէջ Ֆերնանդօն չէ նրա մտածմունքների միակ առարկան: Բայց միթէ ես արժանի եմ նրան: Ո՛հ, ինձ թւում է, թէ երկար, սառն ու տխուր մահուան քնից կրկին մի նոր կեանքի մէջ եմ մտնում: Ամեն բան ինձ նոր և նշանաւոր է երևում:—Ծառերը, աղբիւրը—մի խօսքով ամեն ինչ: Զուրը դարձեալ խողովակների միջով կարկաչում է այնպէս, ինչպէս երբեմն էր, երբ մենք յաճախ խորասուզուած մտքերի մէջ, պատուհանից նայում էինք նրա կարկաչասահ հոսանքին, որ ինձ համար մի մեղեդի էր, մեղեդի, որ հին օրերի յիշատակներ է զարթեցնում մարդու մէջ: Իսկ նա, նա անշուշտ, նոյնն է, ինչ որ էր: Այն, Ստեղծա, դու չես փոխուի, այս ասում է ինձ իմ սիրաբը: Օ, ինչպէս կուզենայի քեզ...





Սակայն ոչ, ես չեմ ուզում, չէ՛ս պէտք է  
ամենից առաջ հանդատանամ և հաւաստի  
լինիմ, թէ ճշմարիտ որ այստեղ եմ գտնու-  
ւում, թէ սա երազ չէ, որ ինձ յաճախ  
քնած և արթուն ժամանակս հեռու աշ-  
խարհներից այստեղ էր բերում: Ստելլա,  
Ստելլա:— Գալիս եմ քեզ:— Ձգում ես ար-  
դեօք իմ ձգտումը՝ գրկումիք ամեն բան մո-  
ռանալ:— Եթէ դու, ամբախտ կնոջս թան-  
կագին ստուէր, դարձեալ սաւառնում ես  
իմ շուրջը, ապա ուրեմն, թող, մոռացիր  
ինձ: Դու հեռու ես ինձանից. թող ինձ, որ  
հրեշտակի բազուկների մէջ մոռանամ, մո-  
ռանում ամեն բան, իմ վիճակը, կորուս-  
տը, իմ վշտերն ու զղջումը: Ա՛խ, ես նո-  
րան այսքան մօտ լինիմ ու միևնոյն ժա-  
մանակ այսքան հեռու: Բայց մի բոպէից  
յետոյ. — Ոչ, չեմ կարող. ես չեմ կարող.  
ես պէտք է մի քիչ հանդատանամ, այլա-  
պէս նրա ոտերի առաջ շնչարդել կը լինիմ:  
Լուդա. (ներս է մտնում). Կը ցան-  
կանայի՞ք ճաշել, պատուելի պարոն  
Քերն. Մարդո՛ւ էք սպասում  
Լուդա. Օ, այո՛, ես սպասում եմ մի  
օրիորդի, որ տիրուհու մօտ է դնացել:  
Քերն. Ի՞նչպէս է ձեր տիրուհին

Լուդա. Դուք ճանաչու՞մ էք նրան  
Քերն. Առաջ ես յաճախ նրա մօտ էի  
լինում: Ի՞նչ է անում նրա ամուսինը:  
Լուդա. Աստուած գիտէ. նա շատ հե-  
ռու է  
Քերն. Հեռու  
Լուդա. Այո՛, նա թողեց այդ քնքոյշ  
արարածին, թող Աստուած ներէ նրան:  
Քերն. Երեի նա արդէն մխիթարուած է:  
Լուդա. Կարծում էք. ուրեմն դուք  
նրան շատ քիչ էք ճանաչում: Նա, ինչպէս  
ես գիտեմ մինչև այժմ, ապրում էր մե-  
նակ, աշխարհից քաշուած, իբրև մի կոյս:  
Համարե՞նք ոչ որ նրան չի այցելում: Նա  
ապրում է իւր ծառաների հետ, շրջապա-  
տուած տեղի երեխաներով: Նա երևան չհա-  
նելով իւր ներքին վշտերը, երևում է միշտ  
ուրախ և հեղահամբոյր:  
Քերն. Սակայն ես կամենում եմ այ-  
ցելել նրան:  
Լուդա. Շատ լաւ. Յաճախ նա հրաւի-  
րում է մեզ՝ ատենակալի կնոջ, պաստօրի  
կնոջ և ինձ և մեզ հետ զանազան բաների  
մասին խօսակցում է: Ի հարկէ, այդպիսի  
դէպքերում նրա ամուսնու մասին ամենեին  
չենք խօսում: Սակայն մի անգամ այդ էլ



եղաւ: Աստուած դիտէ, թէ ինչպէս պատահեցաւ, որ տիրուհին սկսեց նրա մասին խօսել, դովել ու արտասուել նրա համար: Այն ժամանակ մենք բոլորս երեխայի պէս լաց եղանք, և մեզ ոչ մի բանով համարեալ էր կարելի հանգստացնել:

Քերն. (ինքն իրան). Դու արժանի ես դրան, (ըստ ճշմարտի) ծառայի սենեակ ցոյց տուիք:

Լուդա. Կարլ, ցոյց տուր պատուելի պարոնի համար նշանակուած վերևի յարկում երկրորդ համարը:

(Ֆերնանդոն Կարլի մէջ դուրս է գնում):

Մտնում են Լուցիէն և Աննիսէնը

Լուդա. Հը, ինչպէս էր:

Լուցիէ. Մի սիրելի կին, որի հետ ես կարող եմ ապրել: Դուք նրա մասին ինձ շատ բան շատացիք: Նա ինձ չէր թողնում: Ես աղնիւ խօսք տուի ճաշից յետոյ անմիջապէս մայրիկի հետ մեր իրեղէններով դնալ նրա մօտ:

Լուդա. Ես արդէն այդ մտածում էի: Կը ցանկանայիք այժմ ճաշել: Այստեղ մի նոր գեղեցիկ երկարահասակ սպայ է եկել, միայն թէ նրանից չվախենաք:

Լուցիէ. Բոլորովին ոչ. ես զինուորականների հետ աւելի շուտ կը հաշտուիմ քան այլոց հետ: Դոնէ նորա չեն կեղծում և առաջին անգամից չարն ու բարին կարելի է ճանաչել: Մայրիկս քնած է:

Լուդա. Չգիտեմ:

Լուցիէ. Գնամ տեսնեմ ինչ եղաւ (գնում է):

Լուդա. Կարլ, աղամանը կրկին մոռացել ես. այս ինչ տեսակ ես կարգաւորել. տես այդ բաժակները— ես քո գլխին խփելով կը կոտրէի բոլորը, եթէ քեզանից թանկագին չլինէին դուք:

Մտնում է Ֆերնանդոն.

Լուդա. Այն օրիորդը վերագարձել է և այժմ կամենում է ճաշել:

Քերն, Ո՞վ է նա

Լուդա. Ես նորան չեմ ճանաչում. նա լաւ դասակարգից է երևում, բայց առանց կարողութեան. նա մօտիկ ապագայում տիրուհու մօտ է ապրելու:

Քերն. Մանկամորդ է

Լուդա. Շատ երիտասարդ և կամայական օրիորդ է. մայրն էլ հետն է— վերևումը:



Մտնում եւ Լուցիէն

Լուցիէ. Պատիւ ունիմ ներկայանալու.  
Քերն. Շատ բախտաւոր եմ, որ ձեզ  
պէս մի շնորհալի օրիորդի սեղանակից եմ  
լինելու: (Լուցիէն գլուխ է տալիս).

Լուդա. Խնդրեմ, օրիորդ, այստեղ իսկ  
դուք, պարօն, այստեղ մնացէք:

Քերն. Միթէ մենք պէտք է զրկուենք  
ձեզ սեղանակից ունենալու բախտից:

Լուդա. Եթէ ես նստեմ, ամեն ինչ  
կը խառնուի (գնում է).

Քերն. Մենք այժմ Tête à tête ենք ...

Լուցիէ. Սեղանը մէջ տեղ դնենք, ես  
չատ եմ սիրում այդպէս:

Քերն. Դուք արդէն վճռել էք այդ տի-  
րուհու մօտ ապրել.

Լուցիէ. Այո.

Քերն. Ես կարծում եմ, որ այդ նպա-  
տակի համար աւելի ուրախ եւ զրուցասէր  
խօսակից կարող էիք գտնել, քան այդ տի-  
րուհին է:

Լուցիէ. Ոչինչ.

Քերն. Դուք ճիշտ էք ասում.

Լուցիէ. Պարօն, ես տեսնում եմ, որ  
դուք նման էք միւս բոլոր մարդկանց:

Քերն. Այսինքն

Լուցիէ. Ամեն բան ուզում էք իմա-  
նալ. սակայն ես մեծացել եմ առանց ազա-  
մարդկանց շրջանի մէջ մտնելու:

Քերն. Դուք հայր չունէք

Լուցիէ. Ես հազիւ եմ յիշում նրան:  
Դեռ փոքր էի, երբ նա Ամերիկա ճանա-  
պարհորդելու նպատակով հեռացաւ, թողեց  
մեզ: Յետոյ մենք իմացանք, որ նրա նաւը  
խորտակուել է:

Քերն. Եւ դուք այդքան սառնասրտու-  
թեամբ էք ասում այդ բանը:

Լուցիէ. Ուրիշ ինչ կարող եմ անել.  
Նա ինձ շատ քիչ է սիրել: Ես նրան չեմ  
կարող ներել, որ մեզ թողեց: Իսկապէս ինչ  
հարկաւոր է մարդկանց ազատութիւնը: Եթէ  
նա չդնար, զոնէ իմ մայրը հանապաղ չէր  
տխրի եւ վշտակոծ լինի:

Քերն. Եւ այժմ դուք անօգնական էք  
բոլորովին:

Լուցիէ. Ինչ արած. մեր կարողութիւ-  
նը օրէ ցօր քչանում էր, բայց դրա փոխա-  
րէն ես հետզհետէ մեծանում եմ եւ այժմ  
կարող եմ մօրս պահել ու կերակրել:

Քերն. Ես զարմանում եմ ձեր քաջու-  
թեան վրայ:

Լուցիէ. Օ՛, պարօն, երբ մարդ յաճախ



է գտնուել կորստի բերնին և միշտ ազատուել է, նա կը սովորի վստահանալ իւր ոյժերին:

Ճերն. Սակայն չէք կարողանում ձեր քաջութիւնից ձեր մօրն ևս բաժին հանել:

Լուցիէ. Դժբախտաբար նա սրտով աւելի թոյլ է ինձնից: Ես շնորհակալ եմ հօրիցս, որ նա ինձ աշխարհքում ապրել սովորեցրեց: Այժմ ես սիրով եմ ապրում և գոհ եմ աշխարհից: Բայց նա, նա իւր բոլոր յոյսերը հօրս վրայ էր դրել, իւր ծաղիկ հասակը նրան զոհ բերել, և այս նրա համար, որ յետոյ հայրս մոռանար ու թողնէր խեղճ մօրս: Դիտէք, սարսափելի բան է, երբ մարդ իրան լքեալ է զգում: Ես չեմ կարող լաւ զգալ այդ բանը, որովհետև ոչինչ չեմ կորցրել դեռ:—Բայց դուք մտախօհ էք երևում:

Ճերն. Այո, սիրելիս, ով ապրում է— նա կորցնում է (վեր ելնելով) բայց երբեմն և շահուում է: Տայ Աստուած ձեզ քաջութիւն (ընտում է նրա ձեռք) Դուք ինձ զարմացրիք, զաւակս: Ես ևս այս երկրի վրայ յաճախ իմ յոյսերն ու ուրախութիւնները ... Սակայն ...

Լուցիէ. Ի՞նչ էք ուզում ասել

Ճերն. Ամենաշերտ և վառ իղձերով ցանկանում եմ ձեր բախտաւորութիւնը: (Գնում է):

Լուցիէ. Չարմանալի մարդ է. բայց շատ բարի է երևում:



### ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Սեկլա եւ Ծառան.

Սեկլա. Ծուռ արն, դնա, ասն, որ սպասում եմ նրան:

Ծառան. Նա խոստացաւ իսկոյն դալ:

Սեկլա. Տեսնում ես, որ չի գալիս. ես շատ եմ սիրում այդ աղջկան. դնն. նրա մայրն էլ թող հետը գայ (ծառան գնում է):

Սեկլա. Օ՛, ինչպէս անհամբեր սպասում եմ նրան: Բայց այս ինչ ցանկութիւն է, այս ինչ յոյս է, կարծես նոր շոր հագնելու երեխայական ուրախութիւն լինի. Ստեկան, դու երեխայ ես: Բայց ինչո՞ւ համար ես չպէտք է սիրեմ: Սիրտս լեցնելու



համար դեռ շատ կարիք ունեմ ես: Ծանօտ, խեղճ Ստեղլա, Ծանօտ ... Առաջ, երբ նա քեզ սիրում էր, երբ այս գրկում հանգչում էր, նրա մի հայեացքը լեցնում էր քո ամբողջ հոգին: Իսկ ... Այստեղ Աստուած ... Քո վըճիռներն անքննելի են: Երբ ես նրա համբոյրներին յետոյ, իմ աչերն ուղղում էի դէպի Քեզ, երբ մեր սրտերն իրար կպչելուց և իմ դողդոջուն շրթունքներով նրա հոգին ամբողջապէս ծծելուց յետոյ, երջանկութեան արցունքներով դէպի Քեզ էի դառնում ի բոլոր սրտէ աղաչում, որ մեզ այդպէս երջանիկ պահես, Դու այն ժամանակ ոչինչ չէիր կամենում, ոչինչ չէիր պատասխանում (նա մի քուպէ մտածութեան մէջ է ընկնում, սպա շուտով վեր է կենում եւ ձեռքերը սեղմում սրտին) Ո՛չ, Ֆերնանդօ. ես չեմ կշտամբում:

Ահում եմ Տիկինն Չոմմե եւ Լուցիէ

Ստեղլա. վերջապէս սիրելի աղջիկս, այժմ դու իմն ես. տիկին, շնորհակալ եմ ձեր այս վստահութեան համար, որով այս դանձր ինձ էք յանձնում:—Փոքրիկ յամառիկս, աղնիւ, բարի հոգի-Լուցիէ. քեզ արդէն ճանաչում եմ ես:

Տ. Չոմ. Դուք զգում էք անշուշտ, թէ աղջիկս ձեզ յանձնելով ինչ բանից եմ զրրկում:

Ստեղլա. (Փոքր լուսթիւնից յետոյ Տ. Չոմ. մերին նայելով) Ներեցէք, տիկին, ես արդէն ուրիշների պատմածից գիտեմ ձեր ծագումը. ես գիտեմ, որ դուք նշանաւոր ընտանիքից էք. բայց ձեր ներկայ գրութիւնն ինձ զարմացրեց: Առաջին վարկեանից և՛ վստահութիւն և՛ յարգանք զգացի դէպի ձեզ:

Տ. Չոմ. Տիրուհի ...

Ստեղլա. Ոչ մի խօսք այդ մասին, ինչ որ սիրտս է զգում, բերանս դրանից աւելի բան չի ասի: Ես լսել եմ, որ դուք լաւ չէք զգում ձեզ, ինչ է պատահել, նստեցէք խնդրեմ:

Տ. Չոմ. Այո, տիրուհի: Սակայն այս դարնանային ծաղիկ ժամանակուայ ճանապարհորդութիւնը, բազմազան առարկաներն ու այս մաքուր, ջինջ օդը, որ առաջ յաճախ ինձ կազդուրում ու թարմացնում էր, այս բոլորն իմ վրայ այնպէս բարի և ուրախ ազդեցութիւն ունեցան, որ նոյն իսկ անցած գնացած ուրախութիւններին յիշողութիւնը ինձ համար մի հաճելի զգացմունք դարձաւ: Կարծես հոգսս մէջ զգում եմ կրկին իմ



երիտասարդութեան և սիրոյ ոսկի ժամանակների վերադարձը:

Ստեղլա. Օրեր, սիրոյ առաջին օրեր, ոչ, ոսկի ժամանակ, դու չես վերացել երբէք. դու դեռ շրջափակում ես իւրաքանչիւր սիրտ այն վարկեանին, երբ նրա մէջ ծաղկում է սիրոյ դարունը:

Տ. Զում. (Բռնելով նրա ձեռքը) Ո՛հ, ինչպէս բարի, ինչպէս սիրելի էք:

Ստեղլա. Հրեշտակի նման փայլում է ձեր դէմքը. ձեր այտերը վառւում են:

Տ. Զում. Ա՛խ, բայց իմ սիրտը ինչպէս թռչում է դէպի ձեզ, ինչպէս լի է ձեզանով:

Ստեղլա. Դուք սիրել էք. փառք Աստուծոյ, ահա մի ստեղծուած, որ ինձ հասկանալ, ինձ կարեկցել կարող է. որ իմ վշտերի առաջ սառնասիրտ չի մնայ: Մեր վիճակի պատճառը սակայն մենք չենք: Ինչ չէր չարի ես, ինչեր չփորձեցի.—բայց ինչ օգուտ: Ես ոչինչ չէի ուզում, բացի ... Ա՛խ, մեր սիրելիներն ամեն տեղ են և ամեն ինչ նոցա համար է ...

Տ. Զում. Ձեր սիրտը լի է երկնայինով:

Ստեղլա. Ուր էլ որ դառնում էի, միշտ նրա պատկերն էի տեսնում: Ուր էլ որ նա

չինէր, ինչ ընկերութեան մէջ էլ պատահէր, հանապաղ աչերն իմ կողմն էր ուղղում: Ուռուցած դաշտերով անցնելիս և այդու դռնից ներս մտնելով ընկնում էր բազուկներիս մէջ: Նա յաճախ գնում, հեռանում էր, բայց միշտ իւր վերադարձով ուրախացնում էր իրան սպասողին: Երբ ես մտքերիս հետ քաշում էի անտառի խորքերը, նա միշտ այնտեղ էր լինում: Երբ ես օթեակում նստած չէի իմանում ամենևին, թէ ուր է նա, այնուամենայնիւ հաստատ դիտէի, որ նա ուր էլ որ լինէր, միշտ սիրալիր հայեացքով նկատում էր իմ շարժումները, իմ կանգներն ու նստելը: Ես զգում էի, որ իմ դիտարկի փետուրների թօթափունը նրան աւելի էր հետաքրքրում, քան շրջապատող փայլուն հայեացքները, և որ բոլոր մեղեդիներն ու ամբողջ երաժշտութիւնը միանալով, մի ներդաշնակ նուազ էր կազմում նրա սրտի երգի հետ. «Ստեղլա, Ստեղլա, ինչպէս սիրելի ես ինձ»:

Լուցիէ. Միթէ հնձր է այդպէս փոխադարձապէս սիրել ու սիրուել:

Ստեղլա. Սիրելիս, քո հարցին ես չեմ կարող պատասխանել:—Բայց այս ինչով եմ զբաղեցնում ձեզ: Ճիշտ որ մարդ մի մեծ



երեխայ է. որ սակայն վատ բան չէ: Երե-  
խայի նման մենք թագ ենք կենում և ազա-  
ղակում է՛յ, որպէս զի մեզ չգտնեն: Ինչպէս  
ցաւօք սրտի մենք ցանկանում ենք բաժա-  
նուել մեր սիրոյ առարկայից, երբ նա մեզ  
վիրաւորել է, և յետոյ ինչպիսի կոտորած  
սրտով մենք ներկայանում ենք նրան: Ինչ-  
պէս մեր կուրծքը ուռչում, ալեկոծւում է  
այդ բանից և յետոյ որպիսի սիրով, նրա  
ձեռքի մի սեղմումով կամ աչերի մի հայ-  
եացքով կրկին հանգստանում է:

Տ. Զում. Որքան բախտաւոր էք, տիրու-  
հի: Դուք դեռ ես ապրում էք ամենամա-  
քուր, ամենամատաղ մարդկութեան զգա-  
ցումների աշխարհում:

Ստեղա. Վշտերով ու արցունքներով  
անցկացրած հազար տարին շուտով մոռաց-  
ւում է մի երջանիկ ըոպէի՝ հայեացքի, դու-  
ղի, թոթովումի և մերձաւորութեան առաջ,  
առաջին բուռն, կրակոտ համբոյրի, հան-  
դիստ շնչարդել գրկախառնութեան, նոյն  
խոս մոռացութեան առաջ: Սակայն, տիկին,  
դուք անհանդիստ էք, ինչ է եղել:

Տ. Զում. Օ՛, դուք տղամարդիկ, տղա-  
մարդիկ:

Ստեղա. Նոքա են մեզ երջանկացնողն

ու թշուառացնողը: Երջանկութեան օրպիսի  
նախազգացումներով լցնում են նոքա մեր  
սրտերը, ինչպիսի նոր, անձանօթ զգացում-  
ներ ու յոյսեր են խառնւում մեր հոգու-  
մէջ, երբ նոցա ալեյոյզ կրքերը հազորդւում  
էին մեր նեարդերին: Ինչպէս յաճախ ես  
ամբողջովին դողում և սարսում էի, երբ  
նա իւր կրքերի և ցաւերի աշխարհը ան-  
զուսպ արցունքներով իմ առաջ բաց էր ա-  
նում: Ես նրան խնդրում էի ի սէր Աստու-  
ծոյ, որ խնայէ իրան, ինձ—ի զուր էր իմ  
խնդիրը: Նրա մէջ բորբոքեող բոցը անցնում,  
խորանում էր ուղեղիս ամենանուրբ ծալ-  
քերի մէջ և այսպիսով ես օտից դուրս դառ-  
նում էի սիրտ—զգացմունք: Եւ ո՞ւր է այժմ  
այն երկնային կայծը, որ շնչել տար ու վառ  
պահէր խեղճիս մէջ կեանքը և իւր համար  
կերակուր գտնէր ...

Տ. Զում. Մենք ի զուր ենք հաւատում  
մարդկանց: Կրքի ըոպէում նոքա իրանք ի-  
րանց են խաբում, մենք ինչպէս կարող ենք  
չխաբուել նոցանից:

Ստեղա. Տիկին, մի դեղեցիկ բան մա-  
ծեցի: Արի լինինք միմեանց համար այն,  
ինչ որ նոքա պէտք է լինէին մեզ համար:  
Թող մենք այլ ևս չբաժանուենք իրարից:



Տուէք ձեր ձեռքը, այս բոպէից դուք այստեղ կը մնաք:

Լուցիլէ. Անկարելի է.

Ասեղլա. Ինչո՞ւ համար, Լուցիլէ.

Տ. Զում. Աղջիկս զգում է ...

Ասեղլա. Սակայն այս առաջարկը բարեգործութեան նպատակով չէ ամենեւին: Զգում էք, արդեօք որպիսի մեծ բարեգործութիւն արած կը լինէիք, եթէ մնայիք այստեղ: Օ՛, ես այլևս չեմ կարող և չպէտք է մենակ մնամ: Ես սիրով ամեն բան արի մենակութիւնս քաղցրացնելու նպատակով, պահեցի թուշուններ, վայրի այծեամներ և շներ, ես սովորեցնում էի փոքրիկ աղջիկներին մանել և հանգոյցներ անել և այս ամենը նրա համար, որ ես մենակ չլինեմ և շուրջս կեանք լինի: Երբ դարնանային պայծառ առաւօտները կարծես թեթևացնում է բարի աստուածութիւնն իմ վշակերը, երբ ես հանգիստ զարթնում եմ և սիրելի արեւը ծաղկած ծառերի միջով փայլում է և ես օրուայ աշխատանքների համար գործունեայ և ուրախ եմ զգում ինձ, այն ժամանակ միայն ես զուարթանում եմ, ման եմ գալիս և կարգադրութիւններ անում և իմ ազատ սրտով շնորհակալ եմ լինում երկնքին

Նրա ուղարկած երջանիկ ժամերի համար:

Տ. Զում. Այո, տիրուհի, ես այդ շատ լաւ եմ զգում: Պարագմունքն ու բարեգործութիւնը երկնքի տուրքն է, որ փոխարէն է տրուում անբախտ սիրող սրտերին:

Ասեղլա. Փոխարէն, ոչ, տիկին, աւելի լաւ է ասել միսթարութեան համար է տըրուում. կորուստի մի փոքր մասն է տալիս և ոչ կորցրածին փոխարինում: Ի՞նչը կարող է փոխարէն հանգիստանալ կորցրած սիրոյն: Ո՛հ, երբ ես յաճախ մտքերի սվկեանի մէջ տարուբերում էի, անցեալի ուրախ ցնորքները հոգուս մէջ վերաբերում էին ու յուսալի ապագայ էի գուշակում և այսպէս լուսնի ազօտ լուսով այգուս մէջ յետ ու առաջ էի շրջում, այն ժամանակ շատ լաւ հասկանում էի, որ ես մենակ եմ. ի դուր իմ ձեռներս հողմերին էի տարածում. ի դուր էի սիրոյ կախարդիչ խօսքերն արտասանում, կարծելով թէ կը կարողանամ խօսքիս ուժով լուսինը ներքև քաշել: Ես մենակ էի, թփերի միջից ոչ մի շշուկ ինձ չէր պատասխանում և աստղերը վերեւից անհոգ ու ուրախ նայում էին իմ չարչարանքներիս: Եւ ապա դիմում էի օրգուս գերեզմանը:

Տ. Զում. Որդի ունեցել էք.



Ասեյլա. Այո՛, իմ սիրելիս: Ո՛հ, Աստուած իմ, դու այդ երջանկութիւնն ինձ թանգ գնով տուիր, որպէս զի յետոյ կեանքիս բաժակը դառնացնես: Երբ մի գիւղացու տղայ բոբիկ ոտներով ճեմելիքի վրայից դէպ ինձ էր գալիս և մեծ անմեղ աչերով ինձ ձեռնահամբոյր էր ուղարկում, այդ իմ վրայ շատ խոր տպաւորութիւն էր թողնում: Այժմ դրա չափ կը լինէր իմ Մինան, մտածում էի ես, սիրալիբ սրտով դգւում ու հազարաւոր համբոյրներ է՛ դրօշմում նրան, սիրտս տակն ու վրայ էր լինում, արցունքը հեղեղի պէս թափւում էր աչերէս և ես փախչում էի:

Լուցիէ. Այժմ բաւական թեթեացած էք հոգսերից:

Ասեյլա. (ժպտում է եւ նրա ուսին թեթեւ խփում) Ես զարմանում եմ, թէ ինչպէս է, որ դեռ զգալ կարող եմ, ինչպէս է, որ այդ սարսափելի վարկեաններն ինձ չսպանեցին: Նա ընկած էր իմ առաջին, ինչպէս մի պոկուած կոկոն: Եւ ես կանգնել էի նրա գլխի վերեւում ամբողջապէս քարացած, առանց վշտի, առանց գիտակցութեան: Յանկարծ դայեակը վերցրեց երեխային, սեղմեց կրծքին և բացականչեց.

«Կենդանի է»: Ես գժուածի նման մէկ դայեակի վզով ու ոտներով էի փարում, մէկ հեղեղ աչերով տղիս վրայ էի ընկնում — բայց ան, նա խաբուել էր. տղան մեռած էր. և նրա մօտ կատաղի մոլեգին յուսահատութեան հասած կանգնել էի ես (ընկնում է ըստկաթոռի վրայ):

Տ. Զում. Թողէք այդ տխուր տեսարանները.

Ասեյլա. Ոչ, տիկին. ինձ համար շատ լաւ է, որ սիրտս բաց անեմ, ամեն բան մի անգամից ասեմ, ինչ որ ինձ սաստկապէս ճնշում է: Այո՛, երբ դարձեալ սկսեմ պատմել նրա մասին, որ ինձ համար ամեն բան էր, որ — Ես ձեզ ցոյց կը տամ նրա նկարը: Օ՛, ես միշտ կարծում եմ, որ մտրդկանց կերպարանքը նոցա զգացածի ու խօսածների ամենալաւ յայտարարն է:

Լուցիէ. Օ՛, ես շատ հետաքրքրւում եմ:

Ասեյլա. (ըստ է անում առանձնասենեակը եւ նոցա ներս հրաւիրում). Այստեղ, սիրելիս, այստեղ է:

Տ. Զում. Աստուած իմ

Ասեյլա. Այո՛, սակայն նրա էութեան հազարերորդ մասն անգամ դուրս չի եկել



այս նկարով: Այս ճակատն ու սև աչերը,  
այս թուխ գանգուրներն ու երեսի լրջու-  
թիւնը—բայց, աւանդ, նրա սրտի սէրն ու  
հոգու զուարթութիւնը լաւ դուրս չի բե-  
րուած: Ո՛հ, այս ամենը միայն իմ սիրտս  
կարող է զգալ:

Լուցիէ. Տիրուհի, ես զարմանում եմ

Սեղա. Իսկական տղամարդ.

Լուցիէ. Ես պէտք է ձեզ ասեմ, որ ես  
այսօր պոստատնում ճաշում էի մի սպայի  
հետ, որ բոլորովին նման էր այս պարոնին:  
Ո՛հ, նա հէնց նոյն ինքն այս մարդն է.  
Կեանքս գրաւ եմ դնում:

Սեղա. Այսօր, սխալում ես դու,  
սխալում.

Լուցիէ. Այո, այսօր, միայն նա երևում  
էր. մեծ, թուխ և արեակէզ. նա է, ան-  
պատճառ նա է:

Սեղա. (զանգահարում է). Լուցիէ,  
սիրտս պոստում է, ես ցանկանում եմ  
սլանալ, թուչել նրա մօտ:

Լուցիէ. Լաւ կը լինի մարդ ուղարկենք

Սեղա. Ուղարկել, ո՛հ, իմ սիրտս ...

Մտնում է ծառան

Սեղա. Վիլհելմ, վազիր պոստատուն,  
այնտեղ մի սպայ կայ, նա պէտք է, նա իմ  
... Լուցիէ, խօսիր իմ տեղ.—նա պէտք է  
այստեղ գայ:

Լուցիէ. Ճանաչում է նա իւր պարոնին.

Ծառան. Հինգ մատիս պէս:

Լուցիէ. Դեհ, գնա, ուրեմն պոստա-  
տուն. այնտեղ մի սպայ կայ, որ քո տիրոջ  
չափազանց նման է. լաւ նայիր, տես նա է:  
Երգւում եմ, որ նա ինքն է:

Սեղա. Ասա նրան, որ շուտ այտեղ  
գայ, դեհ, շուտ արա, շուտ: Այսպէս տա-  
րածամ, անսպասելի պահին մի դուցէ ...  
Դու սխալում ես, անկարելի բան է. խընդ-  
րեմ, սիրելիներս, ինձ մի քիչ մենակ թո-  
ղէք: (Մտնելով առանձնասենեակը փակում  
է դուռը):

Լուցիէ. Ի՞նչ է պատահել, մայրիկ,  
ինչո՞ւ այդպէս դժգոյն էք.

Տ. Զում. Այսօր կեանքիս վերջին օրն է.  
Իմ սիրտս չի կարող այս բոլորը տանել:  
Ամեն բան միանգամից ... անտանելի է:

Լուցիէ. Աստուած իմ.



Տ. Զում. Ամուսինս, նկարը, սպասողը,  
խմ սիրելիս, նա իմ ամուսինն է, քո հայրը:

Լուցիէ. Մայրիկ, սիրելի մայրիկ, այդ  
ինչ էք ասում:

Տ. Զում. Եւ նա այստեղ է. մի քանի  
րոպէում նրա բազուկները մէջ պիտի ըն-  
կղմուի: Իսկ մենք, Լուցիէ... մենք պէտք է  
հեռանանք:

Լուցիէ. Ո՛ւր, ո՞ր կողմը

Տ. Զում. Իսկոյն և եթ:

Լուցիէ, Գնանք այգի, իսկոյն պոս-  
տատուն կը գնամ, եթէ կառքը դեռ չէ  
մեկնել, առանց հրաժեշտի լուռ ու մունջ  
կը հեռանանք Ստեղայից, երբ նա անսպա-  
սելի երջանկութիւնից հարբած ...

Տ. Զում. Բուռն կարօտով նորա կը գրը-  
կախառնուեն. և ես, այս վարկեանում, երբ  
կրկին գանում եմ նրան, պէտք է յաւի-  
տեան, յաւիտեան կոր ...

Մտնում ե ֆերնանդօսի ծառայի առաջնորդութեամբ.

Մառան. Այս կողմը մուտքէլ էք ձեր  
առանձնասենեակը: Տիրուհիս քիչ է մտում  
խելքը թոցնի: Ա՛խ, ինչքան լաւ է, որ վե-

րադարձաք: (Փերնանդօսն անցնում է նոցա  
մտնող):

Տ. Զում. Նա է, նա է, ես կորած եմ:

Վարագոյրը լջնում է.



### ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ստեղան ուրախ գուարք ֆերնանդօսի հետ ներս  
մտնում.

Ստեղա. (դառնալով պատկերին) Տես-  
նում էք նրան, նա դարձեալ այստեղ է.  
(չորած վեճուսի առաջ) Աստուածուհիդ,  
տեսնում ես, նա կրկին այստեղ է: Ո՞րքան  
յաճախ ես յիմարս այստեղ յետ ու առաջ  
գնալով տրանջալով լաց եմ եղել. — նա էլի  
այստեղ է. ես չեմ հաւատում մտքերիս:  
Աստուածուհիդ, յաճախ նայել եմ քեզ այն  
ժամանակ, երբ նա այստեղ չէր. իսկ այժմ  
երկուսդ էլ այստեղ էք: — Ա՛խ, սիրելիս,



պաշտելիս, երկար ժամանակ հեռու էիր  
ինձանից. բայց այժմ կրկին այստեղ ես.  
(վզին փարուելով) դու այստեղ ես: Ես  
աւելի ոչինչ չեմ կամենում այլ ևս զգալ,  
լսել, գիտենալ, քան այն, որ դու դարձեալ  
այստեղ ես:

Ֆերն. Ստեղա, իմա Ստեղա (գրկելով  
նրան) Փառք Աստուծոյ, դու ինձ այժմ  
կրկին լաց լինելու կարողութիւն ես տա-  
լիս.

Ասելլա Օ, դու միակա . . .

Ֆերն. Ստեղա, թող որ նորից ծծեմ  
քո սիրելի շունչը, քո շունչը, որի դէմ  
տաղտուկ ու դատարկ է ամբողջ երկնային  
հոտն ու համբ:

Ասելլա. Սիրելիս.

Ֆերն. Ոգևորիր քո սիրով այս ամայի,  
անապատ չորացած կուրծքս, տուր նրան  
երանական կեանք քո փարթամ սրտովդ.  
(համընդունում է նրա քերամը):

Ասելլա. Թանկագինս.

Ֆերն. Թարմո՛ւթիւն, զովացո՛ւմ: Այս-  
տեղ, ուր դու շնչում ես, ամեն ինչ գոհ է,  
երջանիկ է: Սէրն ու հաստատ հաւատար-  
մութիւնը կարող են այստեղ շղթայել նոյն  
իսկ դատարկալեզու թափառականին:

Ասելլա. Իմ շատախօսս.

Ֆերն. Դու չես զգում, թէ ինչ նշա-  
նակութիւն ունի երկնային ցօղը այն պա-  
պական մարդու համար, որ ամայի, աւա-  
զոտ անապատից ընկնում է կրծքիդ վրայ:

Ասելլա. Իսկ աղքատի երանութիւնը,  
Ֆերնանդօ, որ իւր մոլորեալ, կորած, միակ  
ոչխարին կրկին իւր սրտին է սեղմում:

Ֆերն. (ոտներն ընկնելով) իմա Ստեղա.

Ասելլա. Կանգնիր, սիրելիս, կանգնիր.  
Ես չեմ կարող քեզ ծնկաչոզ տեսնել:

Ֆերն. Թող, որ այդպէս լինի. ես միշտ  
քո առաջ ծնկաչոզ եմ եղել, իմ սիրտս  
միշտ դէպի քեզ է խոնհարուած եղել, իմ  
անհուն սէրս ու բարիքս:

Ասելլա. Դու կրկին այստեղ ես. ես չեմ  
ճանաչում ինձ, չեմ հասկանում, չգիտեմ  
իսկապէս ինչ է կատարւում շուրջս:

Ֆերն. Ինձ համար կարծես մեր սիրոյ  
առաջին վարկեանները լինին: Դու դար-  
ձեալ բազուկներին մէջ ես. Ծծելով շըր-  
թունքներդ, ես ստուգում եմ մեր սիրոյ  
իսկութիւնը, և երբեմն հարց եմ տալիս ինձ  
զարմացած. թէ արդեօք արթնն եմ թէ  
երազի մէջ:



Ասելլա. Ինչպէս տեսնում եմ, Ֆեր-  
նանդօ, դու դարձեալ խելքի չես եկել:

Ֆերն. Դա Աստուծոց է կախուած. բայց  
քո գրկում այս երանութեան վարկեան-  
ներն ինձ կը համեստացնեն և բարի կը դար-  
ձնեն: Այժմ ես կարող եմ աղօթել, որով-  
հետև բախտաւոր եմ:

Ասելլա. Թող Աստուած քեզ ների, որ  
դու մեղաւոր լինելով հանդերձ, այդքան  
բարի ես, Աստուած, որ քեզ այդպէս յեղ-  
յեղուկ ու հաւատարիմ է ստեղծել: Երբ  
ես լսում եմ քո ձայնի ելեկշները, իսկոյն  
մտածում եմ, թէ սա այն Ֆերնանդօն է,  
որ աշխարհում ինձանից ուրիշ ոչ ոքի չէ  
սիրում:

Ֆերն. Իսկ ես սուղւում, անհետանում  
եմ քո կապոյտ, քաղցր աչերի մէջ, կար-  
ծում եմ, որ այնտեղ բացի իմ պատկերից  
ոչ մի ուրիշ պատկեր կարող չէր մտած լինի  
իմ բացակայութեանս միջոցին:

Ասել. Չես սխալւում.

Ֆերն. Ճիշտ.

Ասել. Այո՛, ճիշտ. մեր սիրոյ առաջին  
օրերից սկսած ես չէի խոստովանում քեզ  
իմ բոլոր մանր մունր վշտերը, որ կեղե-

քում էին սիրաս. և հէնց դրա համար քեզ  
աւելի սիրելի չդարձայ:

Ֆերն. Հրեշտակս.

Ասելլա. Ինչու այդպէս ուշի ուշով նա-  
յում ես վրաս: Ես մեծացել եմ, այնպէս  
չէ՛. տառապանքն ու թախիծը խաւրել են  
այտերուս ծաղիկները.

Ֆերն. Վարդ, սիրելի ծաղիկս. — Ստել-  
լա, ինչո՞ւ համար ես թափահարում գլուխդ.

Ասելլա. Ես զարմանում եմ, որ մենք  
չենք կարող վրէժ հանել ձեզանից այն բո-  
լոր վշտերի փոխարէն, որ դուք՝ տղամար-  
դիկդ պատճառում էք մեզ:

Ֆերն. (Շոյելով նրա զանգուրները).  
Չլինի՞ թէ մազերդ այդ վշտերից են թխա-  
ցել. քո բախտիցն էր, որ դու առանց այդ  
էլ խարտեաչահեր ես. թերևս ոչ մի մազ  
չէ թափուել (նա հանում է սանտրը Ստելլայի  
մազերի միջից եւ մազերը փռում են):

Ասելլա. Չարածճի.

Ֆերն. (Բռնելով մազերից) Ռինալդօն\*  
կրկին հին շղթաների մէջ ընկաւ:

Մտնում է ծառան.

Մառայ. Տիրուհի....



Ասեղա. Ի՞նչ ես ասում, ինչո՞ւ ես դժգոհ դէմք ցոյց տալիս. դու արդէն գիտես, որ իմ ուրախութեան միջոցին այդպիսի դէմքը ինձ համար մահ է:

Ծառան. Սակայն, Տիրուհի, երկու օտարուհիներն ուզում են հեռանալ:

Ասեղա. Ի՞նչ, հեռանա՞լ.

Ծառան. Այո՛, ես տեսայ, որ աղջիկը պոստատուն դնաց. կրկին մօր մօտ եկաւ. այդ տեղից հասկացայ, որ նոքա ուզում են արտակարգ կառք հանել, որովհետեւ հերթապահ կառքը վաղուց արդէն հեռացել է: Ես խօսեցի նոցա հետ: Մայրն արտասուքն աչերին խնդրեց ինձ, որ ես նոցա շորերը ծածուկ իրանց հասցնեմ և ձեզ նոցա կողմից հազարաւոր օրհնութիւններ բարեմաղթեմ. նոքա իբրև թէ այստեղ այլ ևս չեն կարող մնալ:

Փերն. Դա այն տիկի՞նն է, որ այսօր եկել էր իր աղջկայ հետ:

Ասեղա. Ես ցանկանում էի նորա աղջկանը ինձ մօտ վերցնել և իրան այստեղ պահել. . . Ո՞հ Ֆերնանդօ, նոքա այդ վարձուներով ինձ բոլորովին շփոթում են:

Փերն. Արդեօք ինչո՞ւ համար են նոքա հեռանում:

Ասեղա. Աստուած գիտէ, ոչ կարող եմ իմանալ, և ոչ էլ գիտեմ: Ես չէի ցանկանայ նոցա հեշտութեամբ թողնել: Սակայն դու այստեղ ես, Ֆերնանդօ: Այս վայրկեանում ես բոլորովին կը կորցնեմ ինձ: Խօսիր, համոզիր նոցա, Ֆերնանդօ: Հենրիկօս, ասա որ մայրը դայ այստեղ (ծառան գնում է). խօսիր նորա հետ. նրան նեղութիւն չտալու համար ես պարտէղ կերթամ: Շուտով իմ յետեից եկ, և այն ժամանակ սոխակները քեզ կը գիմաւորեն:

Փերն. Օ՛, իմ ամենասիրելիս.

Ասեղա. (Գրկելով նրան) Շուտով կը դնաս:

Փերն. Իսկոյն, իսկոյն.

(Ստեղան գնում է):

Փերն. (մենակ), Երկնային հրեշտակ: Նորա ներկայութեամբ ինչպէս ամեն բան փոխուում, զուարթանում, ազատ է դառնում: Ֆերնանդօ, դու լաւ ճանաչում ես քեզ: Ամեն ինչ, որ այս կուրծքը ճնշում էր, հեռացաւ: Մի՛թէ կարող են կրկնուել դարձեալ այն անցեալ ու գալիք նեղութիւններն ու չարչարանքները:— Եւ սակայն երբ քեզ տեսնեմ, քո ձեռքը բռնեմ, ամեն ինչ փախչում է, ամենայն տեսակ պատկերներ



ու մարեր անյայտանում են հողուս միջից՝  
Մհում ե կառավարիչը.

Կառ. (համբուրելով նրա ձեռքը). Դուք  
կրկին այստեղ էք:

Ֆերն. (Զթողնելով համբուրել) Այո,  
վերադարձայ:

Կառ. Թողէք, թողէք համբուրեմ ձեր  
ձեռքը, ողորմած Տէր.

Ֆերն. Ի՞նչպէս, բախտաւոր ես.

Կառ. Այո, աէր, կինս ապրում է, եր-  
կու աղայ ունիմ և դուք էլ վերադարձար:

Ֆերն. Տնտեսական գործերն ի՞նչպէս են.

Կառ. Ես պատրաստ եմ իսկոյն հաշիւ  
ներկայացնել. դուք պիտի դարձնանար, տես-  
նելով անտեսութեան յառաջադիմութիւնը:  
Սակայն կարճով եմ հարցնել, որտեղ էիք,  
ի՞նչ էիք անում:

Ֆերն, Սո՛ւս, միթէ որ դու իմ առա-  
ջուայ խենթութեան մասնակցել ես, ամեն  
ինչ պէտք է իմանաս:

Կառ. Փառք Աստուծոյ, որ բոշաների  
առաջնորդ չէք եղել. եթէ ոչ ձեր մի խոս-  
քով նորա ինձ կայրէին ու կը տապակէին:

Ֆերն. Այդ բոլորը դու կիմանաս.

Կառ. Ձեր ամուսինը, աղջիկը.

Ֆերն. Չգտայ նոցա. քաղաքում փնտրել  
չեմ վստահանում: Բայց հաստատ լուրերից  
տեղեկացայ, որ կինս ամուսնացել է մի կեղծ  
բարեկամի, մի վաճառականի հետ, որ վերց-  
նելով նրա մօտից իմ նրա մօտ թողած  
դրամագլուխը մեծ տոկոս ստանալու խոստ-  
մամբ, վերջը խաբել, թողել է նրան: Եւ  
գիւղ քաջուելու պատրուակով նա հեռա-  
ցել է այս կողմերից և այժմ հաւանօրէն  
իւր և աղջկայ ձեռագործերով է ապրում  
և վշտալի կեանք վարում: Դու գիտես, որ  
դրա համար նա բաւական քաջութիւն և  
հաստատակամութիւն ունէր:

Կառ. Եւ դուք կրկին այստեղ էք. բայց  
ներե՛նք քեզ այդպիսի երկար բացակայու-  
թեանդ համար:

Ֆերն. Ես շատ ման եկայ.

Կառ. Եթէ ես երջանիկ չլինէի տանը  
ամուսնուս և երկու որդոցս հետ, ես կը  
նախանձէի ձեզ, որ այդքան տեղ էք ման  
եկել: Սակայն այստեղ էք մնալու:

Ֆերն. Եթէ Աստուած կամենայ:

Կառ. Ուրե՛նք վերջ ի վերջոյ էլի մի և  
նոյնը մնաց:

Ֆերն. Ով կարող է մոռանալ անցած  
զնացածը ...



Կառ. Որ մեզ պատճառել է շատ ուրախութիւն և նեղութիւն: Ես շատ լաւ յիշում եմ այն բոլորը, թէ ինչպէս մենք սիրահարուել էինք Յիցիլէի վրայ, ինչպէս թախանձում էինք նրան և ինչպէս չէինք կարող պրծնել մեր երիտասարդական բուն ազատութիւնից, ..

Քերն. Սիրուն բախտաւոր ժամանակ էր այն:

Կառ. Ինչպէս նա մեզ մի զուարթ, կայտառ աղջիկ ընծայեց, և սակայն իւր զուարթութիւնից ու գեղեցկութիւնից շատ բան կորցրեց:

Ֆերն. Թող այդ պատմութիւնը, ինտայիբ ինձ:

Կառ. Ինչպէս մենք այս ու այն կողմն էինք քարշ գալիս. և ինչպէս վերջապէս դառնք այս հրեշտակին և որոշեցինք այլ ևս թափառական կեանք չվարել, այլ չիսօսելով այդ մասին, մէկին կամ միւսին երջանկացնել որոշեցինք: Ինչպէս ստացուածքը ծախելու հանգամանքից օգտուելով մեծամեծ կորուստներով սցս հրեշտակին յափըտակեցինք և դրա ու աշխարհին անձանօթ երեխայի հետ այստեղ բնակուեցանք:

Քերն. Ինչպէս երևում է, դարձեալ դու

առաջուայ շատախօսն ու հրահանգիչն ես. ամենևին չես փոխուել:

Կառ. Այստեղ ես առիթ ունէի միշտ նորանոր բանել սովորելու. և միթէ ես ձեր խղճի հաւատարմատարը չեմ: Եւ երբ այստեղից դուք հեռացաք, չգիտեմ թէ արդեօք ձեր աղջկանն ու ամուսնուն որոնելու մաքուր ցանկութիւնից թէ մի ուրիշ անհանգստութիւնից դրդուած, ես պէտք է ձեր օգնականը լինէի....

Քերն. Այս անգամ բաւական է.

Կառ. Ամեն ինչ լաւ կլինի, միայն թէ այստեղ մնաք:

Գետում է.

Մտնում է ծառան.

Ծառան. Տիկին Զոմէրը.

Քերն. Ներս առաջնորդիր.

(Ծառան գնում է.)

Քերն. (մենակ) Այս կինը տխրեցնում է ինձ. երկրի վրայ ոչինչ գուտ մաքուր, ճշմարիտ բախտաւոր չկայ: Այս կինը . . . Նրա աղջկայ վիճակը փոխեց իմ տրամադրութիւնը: Արդեօք ինչ է դրա վերջը:



Մանուկ ե Տիկին Զումներ.

Ֆերն. (ինքն իրան) Օ՛, Աստուած իմ. սորա կերպարանքն ինձ յիշեցնում է իմ արարմունքը. ո՛հ սիրտ, սիրտ, երբ դու կարող ես ամեն բան զգալ ու կատարել, ապա ինչո՞ւ անցածը մոռանալու բաւական ոյժ չունիս: Կարծես իմ կնոջ կերպարանքը լինի սրա դէմքը. ո՛հ, ամեն տեղ նա ինձ հալածում է. (ըարձր) Տիկին:

Տ. Զում. Ինչ էք հրամայում, պարոն.

Ֆերն. ես կը ցանկանայի, որ դուք ձեր ընկերութեամբ պատուէիք Ստեղլայիս և ինձ. նստեցէք խնդրեմ:

Տ. Զում. Անբախտների ներկայութիւնը երջանիկների համար ծանր է, իսկ, անխ, բախտաւորը թշուառականի համար աւելի ևս անտանելի է:

Ֆերն. ես ձեզ չեմ հասկանում. մի՞թէ չէք ճանաչում Ստեղլային, նրան, որ ամբողջապէս սէր ու աստուածութիւն է:

Տ. Զում. Ողորմած պարոն, ես կամենում եմ ծածուկ հեռանալ. թողէք ինձ. ես պէտքէ զնամ. հաւատացէք, որ ես դրա համար յարգելի պատճառներ ունեմ. խնդրում եմ, թողէք հեռանամ:

Ֆերն. (ինքն իրան) Ի՞նչ ձայն, ինչպիսի կերպարանք. (ըարձր) Տիկին (դառնալով դէպի յետ) Աստուած իմ, սա իմ կինն է (ըարձր) ներողութիւն (շտապով դուրս է գնում):

Տ. Զում. (մենակ) Նա ինձ ճանաչում է. — Ծնորհակալ եմ քեզանից Աստուած, որ այդպիսի ճգնաժամին սրտիս այդքան ոյժ տուիր: Մի՞թէ մի քիչ առաջ նրա մօտ կանգնողն ես էի, ընկճուածս, լքեալս, որ այդպիսի նշանաւոր ժամերում այդպէս հանգիստ ու քաջ էի: Բարի, յաւիտենական նախախնամ հայր, դու մեզանից ամենահարկաւոր բանը չես խլիլ, ինչ էլ որ առնելու լինիս:

Դալիս ե Ֆերնանդօն.

Ֆերն. (ինքն իրան) Արդեօք նա ճանաչէց ինձ (ըարձր) խնդրում եմ, տիկին, թախանձում եմ, բաց արէք ձեր սիրտը:

Տ. Զում. Ուրեմն ստիպուած եմ իմ ամբողջ պատմութիւնն անել և դուք այդպիսի մի օր, երբ ձեր կեանքի միակ ուրախութիւնը նորից ձեզ է դառնում և ձեր ուրախութիւնը տալիս էք կրկին ամենաարժանաւոր կանացի հոգուն, պէտք է լսէք



իմ բողոքներն ու տեսնէք արցունքներս. ոչ պարսն, թողէք ինձ:

Քերն. Ես խնդրում եմ ձեզ.

Տ. Զում. Ինչպէս սիրով կը խնայէի ձեզ և ինձ. իմ կեանքի առաջին երջանիկ օրերի յիշատակութիւնը միշտ մահացու վերք է պատճառում ինձ:

Քերն. Ունեցել էք բախտաւոր օրեր:

Տ. Զում. Հակառակ դէպքում այդ աստիճան յուսահատուած չէի լինել. (մի փոքր երիտասարդութեան տարիները հեշտ ու ուրախ էին անց կենում: Ես չգիտէի թէ մարդկանց համար իմ մէջ ինչ կայ գրաւիչ, որ նորա ահադին բազմութեամբ ցանկանում էին ինձ դուր գալ: Ես քչերին էի հակուած և մի քանիսներին միայն բարեկամ էի համարում ինձ, բայց չկար մէկը որի հետ իմ ամբողջ կեանքս անց կացնէի: Եւ այսպէս անցնում էին վարդազոյն ցնորներին երջանիկ օրերը և իւրաքանչիւր անցած օր ուրախութեամբ ձեռք էր պարզում հեռեեալ օրուան: Սակայն ինձ մի բան պահասում էր: Նրբ ես խորասուզում էի կեանքի մէջ և մարդկանց ապագայ ուրախութիւնն ու վշտերն աչքի առաջ բերում, այն

ժամանակ ուզում էի մի ամուսին, որ կարողանար առաջնորդ լինել ինձ կեանքի մէջ, որ իմ մատաղ սրտի սիրոյս փոխարէն ինձ ընկեր ու բարեկամ հանգիստանար և պաշտպան կանգնէր ծնողներին աեղ, որոնց նրա սիրոյ համար ես թողնելու էի:

Քերն. Յետոյ.

Տ Զում. Ես գտայ ուղած մարդուս. տեսայ այն մարդուն, որի վրայ դրի հէնց առաջին անգամից իմ բոլոր յոյսերը: Նրա հոգու կենդանութիւնը, ինչպէս ինձ թուում էր, այնպէս ներա կերպով կապուած էր սրտի հաւատարմութեան հետ, որ սիրտս բաց արի նրա առաջ, ընկերացայ նրա հետ և վերջը, աւանդ իմ սէրս նուիրեցի: Աստուած է վկայ, թէ նա որքան շնորհակալ էր ինձանից, երբ իւր գլուխը հանդչեցնում էր իմ կրծքին: Ինչպէս առօրեայ հոգսերից ու աշխատութիւններից շտապում էր նա ինձ մօտ և ինչպէս խռովայոյզ ու տխուր բողոքներում նրա կրծքի վրայ նեցուկ և պաշտպան էի գտնում ես ինձ համար:

Քերն. Ի՞նչը կարող էր ձեզ այդ երջանիկ կապակցութեան խանգարիչ հանդիսանալ:

Տ. Զում. Հաստատուն բան չկայ: — Ա՛խ,



նա ինձ բախտաւոր անելուց, ուրիշ ոչ մի բանի մասին չէր մտածում, ինձ երջանիկ տեսնելուց զատ ուրիշ ցանկութիւն չունէր։ Աւաղ, այդ միայն առաջին տարիներն էին մեր կապակցութեան, մեր կեանքի ամենաթեթեւ ժամանակը, երբ մեզ համար ամենաչնչին դժուարութիւններն ու դժկամակութիւնները իսկական չարիք էին թւում մեզ։ Նա ընկերացաւ ինձ այս հեշտանցանելի ճանապարհին, որպէս զի սարսափելի անապատի մէջ մենակ թողնէ։

Քերն. (հետզհետէ շփոթուելով) հապա

նրա զգացմունքը, նորա սիրտը։

Տ. Զում. Կնարելի է արդեօք իմանալ, թէ ինչ է կատարուում տղամարդկանց սըրտում։ Ես չէի նկատում, թէ ինչպէս նա հետզհետէ ամեն բան ... ինչպէս ասեմ... անտարբեր անուանելու իրաւունք չունիմ նրան, նա ինձ միշտ, միշտ սիրում էր, սաղայն իմ սիրով չէր բաւականանում։ Նա իւր սէրը բաժանում էր իմ և մի ուրիշ սիրուհու միջև։ Ես չէի կարող դրա դէմ անտարբեր լինել և նախատում էի, վերջապէս ...

Քերն. Բայց նա...

Տ. Զում. Նա թողեց ինձ, այն թշուառ վիճակը, որ այն ժամանակ ես կրում էի,

անուն չունի։ Իմ բոլոր յոյսերս մի ակընթարթում ի չիք դարձան։ Այն վարկեանում, երբ ուրախացած մեր ծաղիկ պըտուղը քաղել էի մտածում, նա թողեց։ Թողնել, լքանել... մարդկային սրտի ամեն նեցուկ ու քաջալերութիւն. սէր, վստահութիւն, պատիւ, դիւք, օր աւուր աճող կարողութիւն, բազմաթիւ բարեւաւ սերնդի յոյս—այս բոլորը իմ աչքի առաջ մի ակընթարթում չբացան և ես մնացի մեր սիրուց անբախտ, թշուառ դրուականը, անխօս վկան։ Այս ուժդին ազմկայոյզ վշտին հետևեց մահացու տխրութիւն և արտասուարամ և յուսահատ սիրտս յոգնած կամաց կամաց թուլացաւ։ Ես չէի մտածում ամենևին այն մասին, թէ այդ դէպքի առթիւ զրկուեցայ կարողութիւնիցս։

Քերն. Օ՛, դու մեղաւոր.

Տ. Զում. (վիշտը գուպելով) Նա մեղաւոր չէ. խղճալի է այն մարդը, որ որ և է կերպ կապուած է ազնկայ հետ։

Քերն. Տիկին.

Տ. Զում. (իւր յուզումն ծածկելու համար մեղմ ծաղրական ձեւով) Ճշմարիտ եմ ասում, որ այդպիսի մարդուն ես բանտարկեալի տեղ եմ դնում։ Ով իւր բարձր շըր-



Չանից ընկնում է յանկարծ իրան բոլորո-  
վին անժանօթ անհամապատասխան շրջան,  
նա մեղնում մի առ ժամանակ խաբում է  
իրան, բայց վայ մեզ, երբ նրա աչերը բա-  
ցուին—եւ վերջ ի վերջոյ նրա մօտ ոչ մի  
գեր չէի կարող խազալ, բայց եթէ ոչ մի  
տանախկին լինել, որ թերեւս նրան սիրում  
է, ցանկանում է նրան հաճոյ լինել, նրա  
տան ու գուակի բարեխառնութեան է նուի-  
րում իւր կեանքը. և հէնց այս էր պատ-  
ճառը, որ նորա սիրտ ու հոգին դատարկ  
ամայի էր մնում, նա ինձ իւր հաւասար  
ընկեր չէր համարում, իմ մօտիկութիւնը,  
ընկերութիւնը նրան գոհացուցիչ չէր: Նա  
մեղաւոր չէ:

Քերն. (ընկնելով ոտները) Քո առաճն  
եւ եմ.

Տ. Զով. (Արտասուահեղեղ աչերով ընկ-  
նելով նրա վզին). Սիրելիս.,

Քերն. Յիցիլիէ, ամուսինս.

Յիցիլիէ. (յանկարծ հեռանալով նրանից)

Ոչ, դու իմը չես, դու ինձ թողիր, սիրելիս  
(տորից մօտննալով) Յերնանդօ, ով էլ որ  
լինիս, թող, որ թշուառիս արցունքները  
թափուին քո կրծքին, միայն մի վարկեան  
ինձ քօնը համարիր, և յետոյ յաւիտեան

թող ինձ. եւ այսօր քո կինը չեմ, ինձ մի  
մերժիր քեզանից:

Քերն. Աստուած իմ. Յիցիլիէ, քո ար-  
ցունքներն իմ այտերիս վրայ, քո սրտի  
բաբախումը իմի վրայ և . . . Օ՛ր խնայիր ինձ

Յիցիլիէ. եւ ոչինչ չեմ ուզում, Յեր-  
նանդօ, միայն մի վայրկեան, թող որ սիրտս  
զեղեմ քո առաջ. դու կը զօրանաս և կա-  
դատուիս ինձանից:

Քերն. Աւելի շուտ սիրտս թող պա-  
տուռի, քան քեզ թողնեմ:

Յիցիլիէ. եւ քեզ դարձեալ կը տեսնեմ,  
բայց ոչ այս երկրի վրայ. դու պատկանում  
ես մի ուրիշի, որից քեզ չեմ կարող յա-  
փշտակել: Օ՛ր, երկինք. թող, որ մի հայեացք  
ձգեմ քո անհունութեան և յաւիտենակա-  
նութեան վրայ: Այդ ինձ համար այս սար-  
ուութիւնն միակ, միակ մխիթա-  
րութիւնն է:

Քերն. (ընկնելով ձեռքից և գրկելով)  
Ոչինչ, ոչինչ, չի կարող այս աշխարհում քեզ  
ինձանից բաժանել. եւ կրկին գտայ քեզ:

Յիցիլիէ. Մի գիւտ, որ ամենևին չէիր  
որոնում.

Քերն. Թող, թող այդ, եւ քեզ փնտ-  
րում էի, քեզ, որ իմ լքեալ և հաւատա-



իմ ամուսինս ես: Նոյն իսկ այստեղ, այս հրեշտակի գրկում ես չէի գտնում ոչ մի հանգստութիւն, ոչ մի ուրախութիւն: Ամեն ինչ յիշեցնում էր քեզ, քո աղջկան, իմ Լուցիէին: Բարի երկինք, որպիսի ուրախութիւն. միթէ այդ սիրարժան արարածը իմ աղջիկն է. — ես քեզ ամեն տեղ փնտրում էի. 3 տարի է, որ ես թափառում եմ: Մեր բնակութեան տեղում ես իցաւ սրտի տեսայ, որ մեր տունը օտարի ձեռքով փոխուել է և իմացայ տխրութեամբ, որ դու կարողութիւնիցդ գրկուել ես: Քո անյայտանալը իմ սիրան էր ծակում. ես չէի կարող քո հետքը գտնել: Չանձրացած ինձանից և կեանքէս՝ օտար ծառայութեան մէջ մտայ, այս շորերն հազայ, օգնեցի աղնիւ Կորսիկացոց մեռնող աղատութեան ճնշման գործին և այժմ անսնում ես դու ինձ երկար ու զարմանալի շփոթութիւնից յետոյ կրկին քո լանջին հանդչած. իմ աղնիւ, թանկ կազին ամուսինս:

Մտնում է Լուցիէն.

Քերն. Ո՛հ, աղջիկս.  
Լուցիէ. Սիրելի աղնիւ հայր, եթէ նուրբց իմ հայրն էր:

Քերն. Միշտ և յաւիտեան.

Յիցիլիէ. Իսկ Ստեղծան.

Քերն. Երկար մտածելու բան չկայ. խեղճ աղջիկ. ինչո՞ւ համար, Լուցիէ, այս առաւօտ մենք չճանաչեցինք իրար. բայց սիրտս վկայում էր, դու դիտես, թէ ինչպէս յուզուած բաժանուեցայ քեզանից: Ա՛խ, ինչո՞ւ, մենք շատ բանի առաջն առած կը լինէինք: — Բայց հարկաւոր է հեռանալ այստեղից: Ես Ստեղծային կասեմ, թէ դուք շուղենալով ձեր «միաս բարեով» տխրեցնել նրա սիրտը, ծածուկ հեռանալ էք ցանկանում: Իսկ դու, Լուցիէ, շուտով գնա մի կողք լծել տուր. ծառան թող իմ իրեղէնները ձերինի հետ կապէ: Դու, սիրելի, թանկագին կինս, այստեղ մնա, իսկ դու, իմ աղջիկս, երբ ամեն բան պատրաստ կը լինի, եկ իմաց տալու: Այդու սրահում ինձ կըսպասէր: Ես պէտք է նրանից մի կերպ ազատուեմ, պէտք է նրան ասեմ, որ իբր թէ ուզում եմ ձեզ ճանապարհ ձգել. հոգ տանել, որ անվտանգ գնաք և ձեր ճանապարհածախսը վճարեմ: — Խեղճ Ստեղծա, բարութեանդ փոխարէն խաբուում եմ քեզ: Հեռանանք:

Յիցիլիէ. Հեռանանք. — Մի խօսք միայն.



Քերն. Այն, հեռանանք, սիրելիքս, գընանք այստեղից.

(Յիցիլիէն եւ Լուցիէն գնում են)

Քերն. (մենակ) Հեռանա՛ր, ո՛ր, ո՛ր կողմը. միայն գաշոյնի հարուածը կարող է բոլոր վշտերից ազատուելու ճանապարհ ցոյց տալ և ինձ խոր անզգայութեան մէջ ձգել, որի համար ես այժմ ամեն բան կը տայի: Ի՞նչ վիճակի մէջ ես, թշուառական: Յիշիր այն երջանիկ օրերը, երբ խորին յուժկա լութեամբ թշուառներէ դիմաց կանգնած պատրաստ էիր կեանքդ զօհելու: Այն բախտաւոր օրերը ի՞նչ էիր զգում, իսկ այժմ: Օ՛, երջանիկ օրեր, գոնէ մի ժամ առաջ սոցա հանդիպած լինէի, ամեն ինչ կը ծածկուէր. ես կրկին տեսած չէի լինի Ստելլա՝ ին և ոչ էլ նա ինձ և այսպիսով կը հանգստանայի, հաւատացնելով ինձ, որ այս չորս տարուայ մէջ նա ինձ մոռացած կը լինի, բայց այժմ, ինչպէս երևում նրան, ի՞նչ ասեմ. ո՛ր իմ մեղք, ճնշում, խեղդում ես ինձ այս ակնթարթում: Թողնել այդ երկու սիրելի էակներին այն ժամանակ, երբ ես նոցա նորից գտնում եմ, նշանակում է ինքն իրան թողնել: Թշուառական, ո՞ սիրտս տրաքւում է: Վարագոյրն իջնում է:

### ՉՈՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Սեյլայի այգում մի մենակաց.

Սեյլան մենակ

Ծաղկում ես դու, իմ յուսալի յաւիտենական հանգստեան ակզի. առաջուանից աւելի պերճ. սակայն ինձ այլ ևս չե՞ս դրաւում: Ես սարսափում եմ քեզանից, սառն, քարասիրտ երկիր: — Ա՛խ, ինչպէս յաճախ երևակայութեան ընկերներում պատրաստ էի ես արդէն գլուխս ու կուրծքս մահու ծոց դնելու և հանգարտ կանգնած էի քո խոր եղերքի առաջ և դէպի վայր էի քայլում վշտալի սիրտս քո կենդանի ծածկի տակ թաղելու: Դուք եղծութիւն, ապակա նութիւն, ինձ երևում էիք իբրև մի սիրալի տղայ, որ պէտք է ծծէր այս լցուած ու ճնշուած սիրտս և ամբողջ էութիւնս դարձնէր մի ուրախ և անհող երազ: Իսկ այժմ դու երկնքի արև, որքան ուրախ և պայծառ ես փայլում և ինձ ուրախացնում: — Նա դարձեալ այստեղ է. մի ակնթարթում շուրջս կենդանութիւն առաւ. իմ սիրելիս



դարձեալ այստեղ է. ես այժմ ամբողջապէս կեանք եմ. նորից պէտք է նրա շրթունքներից ծծեմ նոր, տաք, սիրաբորբոք մի կեանք: Դէպի նա, նրա մօտ, նրա հետ հաստատուն սիրով ապրել. ֆերնանդօ, կարծես նա դալիս է. Ո՛չ, ո՛չ— Այստեղ պէտք է նա ինձ գտնէ, այստեղ, իմ վարդի սեղանի վրայ, իմ վարդի սաղարթների տակ: Այս կոկոնները նրա համար պէտք է քաղեմ: Այստեղ, այստեղ, իսկ յետոյ ես կառայնորդեմ նրան այս մենանոցը: Ինչքան լաւ է, որ երկու մարդու համար եմ յարժարացրել, թէպէտ և բաւական նեղ է: Այստեղ էի պահում առաջ իմ գրքերս ու գրական պիտոյքներս: Միայն թէ նա դար, ամեն բան կը թողնէի. մի՞թէ նա դարձեալ իմն է. մի՞թէ նա այստեղ է:

Մտնում է Ֆերնանդօն.

Ստեյլա. Ո՛հ, սիրելիս, ո՞ւր մնացիր, ո՞ւր ես անգինս. երկար ժամանակ է, մե՞նակ եմ այստեղ. (վսխեցած) Ինչ է պատահել.

Քերն. Այդ կանայք իմ տրամադրութիւնս փոխեցին. մեծը ազնիւ կլին է, սակայն չի ուզում այստեղ մնալ, առանց լսե-

լու մի որ և է պատճառաբանութիւն, նա կամենում է հեռանալ, թոյլ տուր նրան, Ստեյլա:

Ստեյլա. Երբ նորա համար իմ խնդիրքը նշանակութիւն չունի, ես զօրով չեմ պահի նրան: Ես մենակ էի և ինձ ընկեր էր հարկաւոր, իսկ այժմ, (ընկնելով նրա վզով) իսկ այժմ չէ որ դու այստեղ ես, դու ինձ մօտ ես:

Քերն. Հանգստացիր Ստեյլա.

Ստեյլա. Թող, որ արտասուեմ. Ա՛խ, ի՜նչպէս կուզէի, որ այս օրը շուտով անցնէր, ամբողջ մարմնով դողում եմ: Այսքան անսպասելի ուրախութիւն և երջանկութիւն միանգամից. մի գուցէ չկարողանամ այս բոլորը տանել:

Քերն. (ինքն իրան) Թշուառականս, պէտք է նրան թողնեմ, (ըստ ձր) թող ինձ, Ստեյլա.

Ստեյլա. Այդ քո ձայնն է, քո սիրելի ձայնը— Ստեյլա, Ստեյլա: Դու գիտես, թէ որքան ուրախութեամբ եմ լսում քեզանից այդ անունը— Ստեյլա. ոչ ոք չի կարող այնպէս տրտասանել, ինչպէս դու: Այդ բառի հնչման մէջ դու դնում ես ամբողջապէս սէրդ ու հոգիդ. Ինչպէս թարմ է դեռ իմ



մէջ այն տարուայ յիշողութիւնը, երբ առաջին անգամ լսեցի քեզանից այդ խօսքի արասասնութիւնը, որով և երջանկութիւնս սկսուեցաւ:

Քերն. Երջանկութիւն.

Ասելլա. Դուքէ այժմ դու սկսես հաշուել այն բոլոր տխուր և յուսահատ ժամերը, որ քո պատճառով ես անց եմ կացրել: Թող, Պերնանդօ, թող այդ: Օ՛, այն վարկեանից, երբ ես քեզ առաջին անգամ տեսայ ինչպէս ամեն բան փոխուեցաւ իմ հօգու մէջ: Յիշում ես այդում մօրեղբօրս հետ մեր ճաշը: Յիշում ես, թէ ինչպէս մօտեցար մեզ. մենք նստել էինք բարձր շաղանակեհու ստուերի տակ, հովանոցի յետեր:

Քերն. (ինքն իրան) Սիրտս պէտք է տրաքացնէ (բարձր) Այն յիշում եմ, իմն Ստեյլա:

Ասելլա. Ինչպէս մօտեցար ինձ, ես չգիտեմ, նկատեցիր թէ չէ, որ առաջին վարկեանից սկսած իմ հայեացքը քո վրայ էր ուղղած: Բայց շուտով ես նկատեցի, որ քո աչերն ինձ էին որոնում: Ապա մօրեղբայրս տալով քեզ ջութակը ինդրեց նուագել. դու ընդունեցիր: Եւ մինչդեռ դու

նուագում էիր, աչերս անմեղ կերպով քեզ էին նայում: Նայում էի կերպարանքիդ իւրաքանչիւր գծին, իսկ դու լուութեան միջոցներին մէջ ընդ մէջ ինձ էիր սեեռում քո աչերը և մեր հայեացքները հանդիպում էին իրար: Ես կարմրում, ներքև էի նաշում այսպիսի ըսպէներին: Դու այդ նկատում էիր Պերնանդօ, որովհետև զգալի էր: Թէ ինչպէս ժամանակ առ ժամանակ շիտթում, եղանակից շեղում էիր, որ և մօրեղբօրս տհաճութիւն էր պատճառում: Քո այդ իւրաքանչիւր սխալը շատ քաղցր էր ինձ համար: Ինչ էլ որ տալու լինէին ինձ, ես անկարող էի քո երեսին նայել այդ ժանանակ: Ես մտքինս ասացի և դուրս ելայ:

Քերն. Ինչպէս յիշում ես ամենափոքր մանրամասնութիւններն անգամ (ինքն իրան) Անբախտ յիշողութիւն:

Ասելլա. Ես ինքս յաճախ զարմանում եմ, թէ ինչպէս քեզ սիրում եմ, ինչպէս քեզ մօտ ինձ մտնանում եմ. այդ բոլորն այնպէս մանրամասն եմ յիշում, կարծես այսօր կատարուած լինի: Որքան անգամ ինքս ինձ պատմել եմ այդ բոլորը, Պերնանդօ: Ինչպէս դուք ինձ որոնում էիք. ինչպէս դու իմ ընկերուհուս ձեռից բռնած,



այգու մէջ թափառում ու եղանակում էիք։  
 Ստեղլա, Ստեղլա։ Ես հագիւ էի խօսքերդ  
 լսում, որ իսկոյն ճանաչում էի քո ձայնը։  
 Եւ թէ ինչպէս գտնում էիք ինձ և դու իմ  
 ձեռից բռնում էիր։ Ով աւելի շատ էր շը-  
 փոթւում, ես թէ դու. երկուսս էլ հաւա-  
 սարապէս։ Եւ հէնց այդ վարկեանից, ինչ-  
 պէս ինձ ասում էր իմ բարի Սառան, այդ  
 երջանիկ գիշերը, ամեն բան սարքուեցաւ։  
 Բազուկներիդ մէջ լինելը ճրպիսի երջան-  
 կութիւն էր ինձ համար։ Երանի թէ Սա-  
 ռաս տեսնէր իմ բախտաւորութիւնը։ Նա  
 մի բարի արարած էր. նա ինձ համար աղիւ-  
 բում, արտասուում էր, երբ ես հիւանդ էի,  
 սիրոյ հիւանդ։ Ես ուրախութեամբ կը վեր-  
 ցընէի նրան ինձ հետ, երբ քո սիրոյ համար  
 ամեն ինչ թողի։

Քերն, Ամեն ինչ.

Ստեղլա. Այս խօսքերը քեզ զարմացնում  
 են, Փերնանդօ։ Միթէ ճշմարիտ չէ, որ  
 ամեն բան թողի. կամ չլինի թէ դու կը  
 նախատես Ստեղլայիդ նրա խօսքերին ուրիշ  
 նշանակութիւն տալով։ Սակայն ի սէր քո  
 ես դեռ շատ քիչ բան եմ արել։

Քերն. Այո, թողիր դու քո մօրեղբօրդ,  
 որ քեզ հօր պէս սիրում էր, որ իւր ձեռ-

ների վրայ էր տանում քեզ, որի կամքը քո  
 ցանկութիւնն էր, միթէ սա շատ բան չէ-  
 կարողութիւն, կալուածք, որ քեզ էր պատ-  
 կանում, դու թողիր ու հեռացար. միթէ սա  
 ոչինչ է։ Այն տեղը, որ մանկութիւնից ի  
 վեր սիրելի էր քեզ. խաղընկերուհիները...

Ստեղլա. Սակայն այդ բոլորը առանց  
 քեզ, Փերնանդօ, առանց քո սիրոյ, ոչինչ  
 էին ինձ համար։ Այն վարկեանից ես սիրեցի  
 այս աշխարհում ապրել, երբ հոգուս մէջ քո  
 սէրն զգացի։ Ասածս խոստովանանք լինի,  
 որ յաճախ միայնակ ժամերում ինքս ինձ  
 մտածում էի. ինչո՞ւ այս ամենը նրա հետ  
 միասին չեմ կարող վայելել։ Ինչո՞ւ համար  
 մենք պէտք է խոյս տանք այստեղից. ինչո՞ւ  
 չմնալ և տէր չդառնալ բոլոր ստացուածքին.  
 միթէ մօրեղբայրս կը մերժէր նրան իմ  
 ձեռը, նրան . . Օ՛, ոչ. հապա ինչո՞ւ փախ-  
 չել։ Ինչ արդարացնելու միջոցներ ես շատ  
 ունէի, այսպիսի միջոցներն ինձ մօտ չէին  
 պակասում։ Բայց գուցէ, ասում էի ես, նա  
 մտադիր է հարսնացուին աւարի նման փախ-  
 ցնելով տէր դառնալ. կամ գուցէ հպարտու-  
 թեամբ կամենում է իւր հարսնացուին  
 առանց մի որ և է օժիտի, կամ ստացուած-  
 քի տուն տանել։ Դու կարող ես երևակայել։



որ իմ հպարտութիւնն ևս ոչ պակաս շոյ-  
ւում էր, երբ մտածում էի, որ ես եմ քեզ  
համար միակը, լաւագոյնը. դու բախտաւոր  
կերպով վերջացրիր այդ բանը:  
Քերն. Կորած եմ:

Մտնում է ԱճճԽԵՆ.

ԱճճԽԵՆ. Ներեցէք, տիրուհի. ուր մնա-  
ցիք, պարոն զնգապետ. ամեն ինչ արդէն  
կապուած, պատրաստ է. միայն ձեզ են  
սպասում: Տիկինն այսօր այնքան այս ու այն  
կողմը վազվզեց, որ հազիւ կարող է օտքի  
կանգնել. իսկ դուք այստեղ սպասում էք:

Ասելլա. Դնա, Փերնանդօ, ճանապարհ  
ձգիր նոցա, վճարիր նոցա ճանապարհա-  
ծախսը, բայց դու իսկոյն վերադարձիր:

ԱճճԽԵՆ. Միթէ նոցա հետ չէք դնա-  
լու. Տիկինը երեքի համար է կողք վարձել.  
չէ որ ծառան ձեր իրեզէններն արդէն կա-  
պել է:

Ասելլա. Փերնանդօ այստեղ մի սխա-  
լութիւն կայ.

Քերն. Ի՞նչ է հասկանում այդ երեխան.

ԱճճԽԵՆ. Ինչ եմ հասկանում. ի հարկէ  
զարմանալի, հետաքրքրի բան է, որ պարոն  
զնգապետը այդ օտարուհիների հետ սի-

րուհուցս հեռանալ է կամենում: Նոքա դեռ  
այսօր ճաշի ժամանակ են ծանօթացել տի-  
րուհու հետ: Ճաշից յետոյ նոցա բաժա-  
նումը որքան քնքոյշ էր. նոցա հրաժեշտը  
որքան մտերմական:

Ասելլա. (զփոթուած) Փերնանդօ.

Քերն. Դա երեխայ է.

ԱճճԽԵՆ. Տիրուհի, մի հաւատար դրան,  
ամեն բան արդէն կապուած է. պարոնը նոցա  
հետ դնալու է.

Քերն. Ո՞ւր, ո՞ր կողմը.

Ասելլա. Աննիսէն, հեռացիր (Աննիսէնը  
զնում է) Փերնանդօ, ինձ այս սարոսփելի  
զփոթութիւնից ազատիր: Ես ոչնչից չեմ վա-  
խենում. սակայն ինձ վրայ ահ է ազդում  
այդ տղայի շատախօսութիւնը: Դու յուզ-  
ուած ես, Փերնանդօ. ես քո Ստեղան եմ:

Քերն. (ղառնալով եւ քոնելով ձեռքը)

Դու իմն ես, Ստեղաս.

Ասելլա. Դու վախեցնում ես ինձ, Փեր-  
նանդօ, շատ կատաղի կերպով ես նայում:

Քերն. Ստեղա, ես մի չորագործ և թոյլ  
մարդ եմ. ես քեզանից ոչինչ չեմ պահում.  
Փախչել—եւ այն սիրտը չունեմ, որ դաշոյնը  
միանգամից քո կուրծքը կոխեմ: Ես մտա-  
ծեցի քեզ ծածուկ թունաւորել, սպանել:



Ասելլա. Ողորմած Աստուած.

Քերն. (կատաղութիւնից դողալով).

Ա. իս, միայն թէ չտեսնէի նրա թշուառութիւնը, չսէի նրա յուսահատութիւնը . . . փախչել . . .

Ասելլա. Անտանելի է (ընկնելու մօտ ընկնում է ֆերնանդոյին):

Քերն. Ստեղծաբան, բազումներին մէջ ես, Ստեղծաբան, ինձ համար ամեն ինչ ես, Ստեղծաբան (սառն) ես քեզ թողնում եմ:

Ասելլա. (շփոթուած ժպտալով) ինձ . .

Քերն. (Ատամները կրճատցնելով) Գեղ, այո, այն կնոջ, որին դու տեսար, այն աղջկան հետ . .

Ասելլա. Մթնում է շուրջս.

Քերն. Եւ այն տիկինն իմ կինն է (Ստեղծաբան ապշած նրան է նայում եւ ձեռները ցած թողնում). Եւ այն օրիորդը իմ աղջիկն է, Ստեղծաբան (նա նոր է նկատում, որ Ստեղծաբան ուշաթափուում է) Ստեղծաբան. (մի տեղ նստեցնելով) Ստեղծաբան, օգնութիւն, օգնութիւն:

Մտնում են Յիցիլիէ եւ Լուցիէ.

Քերն. Տեսէք այս հրեշտակը . . նա մեռ-

նում է. նայեցէք, օրհնեցէք (լուրաքանչիւրն աշխատում է մի քանով օգնել):

Լուցիէ. Ուշքի է գալիս.

Քերն. (Լուր նայելով վրան) Գո միջոցով, քո շնորհով . . (գնում է):

Ասելլան. Ո՞վ, ո՞վ — (վեր կենալով) Ո՞ւր է նա: (Շորից ընկնում է նայելով իւր շուրջը կանգնածների վրայ. Շնորհակալ եմ, շնորհակալ . . Ո՞վ էք դուք.

Յից. Հանգստացէք, մենք ենք.

Ասելլա, Դո՞ք. — Միթէ դեռ չէք գնացել. դո՞ք էք. Աստուած իմ, ո՞վ ասաց ինձ. ո՞վ ես դու, արդեօք դու (ընկնելով Յիցիլիէի ձեռից) Ո՞չ, տանել չեմ կարող,

Յից. Միբելիս, թանկադինս, հրեշտակս. ես քեզ կրճքիս եմ սեղմում:

Ասելլա. Ասա, ասա. ես ուզում եմ անպատճառ իմանալ, ասա ինձ դո՞ք ես . .

Յից. Ես եմ. այո, ես նրա կինն եմ:

Ասելլա. (ցնցուելով եւ աչքերը ծածկելով) Իսկ ես . . . (շփոթուած յետ ու առաջ է գնում):

Յից. Եկէք գնանք ձեր սենեակը:

Ասելլա. Ի՞նչ ես յիշեցնում ինձ. ի՞նչն է իմը. Օ՞, սարսափելի է. Միթէ խոյ ծառերը, որ ես եմ տնկել և պահել մեծա-



ցրել, միշտ ստքա իմը չեն: Ինչու մի բու-  
պէում ամեն ինչ ինձ համար օտարացու-  
թողնուած, լքեալ, կորած, յաւիտեան կո-  
րած. Ֆերնանդօ, Ֆերնանդօ:

Յից. Գնա, Լուցիէ, տես ո՛ւր է քո  
հայրը.

Սեղա. Ի սէր Աստուծոյ սպասիր, թող  
նա հեռանայ, թող նա այլ ևս չգայ: Հեռա-  
ցիր հայր, ամուսին..

Յից. Քաղցրիկ սիրելիս.

Սեղա. Դու սիրում ես ինձ. դու ինձ  
կրծքիդ ես սեղմում. ո՛չ, ո՛չ: Թող ինձ, ար-  
համարիր ինձ (փարելով նրա վզով): Մի  
վարկեան ևս, և ամեն ինչ կը վերջանայ ինձ  
համար. օ՛, սիրտս. իմ սիրտս...

Լուցիէ. Ձեզ հանգիստ է հարկաւոր.

Սեղա. Ես չեմ կարող ձեր հայեացքը  
տանել, ես ձեր կեանքը թունաւորել եմ.  
ձեզանից խլել եմ ձեր ամեն բանը: Դուք  
այժմ թշուառ էք: Իսկ ես.. որպիսի եր-  
ջանկութիւն նորա բազուկների մէջ (ծունկ  
է չորում) օ՛, կը ներէք արդեօք ինձ:

Յից. Բաւական է. բաւական (նորա  
աշխատում են նրան բարձրացնել):

Սեղա. Այստեղ կամենում եմ պառ-  
կել ազաչել, պազատել Աստուծուն և ձեզ-

ներողութիւն, գթութիւն (վեր է թռչում)  
Մխիթարութիւն տուէք ինձ, մխիթարու-  
թիւն, ես մեղաւոր չեմ:— Դու տուիր նրան  
ինձ, երկնային սուրբ Աստուած. եւ ես  
նրան պահում եի ամուր, իբրև քո շնոր-  
հած ամենասիրելի պարգևը: Թող ինձ, սիրտս  
որաբւում է..

Յից. Անմեղս, սիրելիս..

Սեղա. (վզին փաթաթուելով) Քո ա-  
չերի մէջ, քո շրթունքների վրայ ես երկ-  
նային խօսքեր եմ կարգում. պահիր ինձ,  
բռնիր, ես մեռնում եմ: Նա ինձ ներում է  
նա դդում է իմ թշուառութիւնը:

Յից. Քոյր. քոյր իմ, քաջացիր, հան-  
գատացիր մի վարկեան. հաւատան, որ մեր  
սրտերի մէջ այսպիսի զգացմունք դնողը մեզ  
այսպէս թշուառացնողը դրա փոխարէն մը-  
խիթարութիւն և օգնութիւն ևս կարող է  
ուղարկել:

Սեղա. Թող, որ քո վզին փաթաթ-  
ուած մեռնեմ:

Յից. Գնանք.


Սեղա. (Մի փոքր լուռութիւնից յետոյ  
մոլորակաւոր յետ դառնալով). Թողէք ինձ  
բոլորդ էլ: Տես, ահա ճնշում է իմ հոգին  
տանջանքների և խռովութիւնների մի ամ-



բողջ աշխարհ և լցուում է նա ամբողջապէս անասելի վշտերով: Անկարելի է, անկարելի է և այսպէս, միանգամից, սա անտանելի անըմբռնելի է (մի առ ժամանակ լուռ կոր ի գլուխ կանգնած մնում է, ապա աչերը քարծրացնելով հայեացքն ուղղում է երկուսի վրայ և աղաղակ քարծրացնելով փախչում):

Յից. Լուցիէ, զնա նրա յետևից նայիր նորան. (Լուցիէն գնում է): Ներքև նայիր, երկնաւոր հայր, տես քո որդոց նեղ դրութիւնը, տանջուելով ես շատ բան սովորեցայ: Ոյժ տուր ինձ — Եւ եթէ այս հանդոյցը կարող է պատահել որ արձակուի, դու երկնային Աստուած, մի խզէ այդ:

Վարագոյրն իջնում է:



### ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ասելայի առանձնասենեակը. լուսնկայ գիշեր.

#### ԱՏԵԼՎԱ.

(Չեռին քննած Փերնամուռոյի պատկերը աշխատում է շրջանակից դուրս հանել) Ծածկեր, շրջապատիր ինձ, գիշեր, բռնիր,

վարիր ինձ, ես չգիտեմ ուր եմ գնում: Ես պէտք է, ես կուզեմ հեռու գնալ, բայց ուր, ախ, ճրտեղ, ես հալածուած եմ իմ ձեռակերտից: Միթէ այլ ևս չեմ ման դալու այնտեղ, ուր դու, հեղիկ լուսնակ, թափում ես քո ազօտ լոյսը կատարների վրայով, որ դու հսկայական ահարկու ստուերներով պարփակում ես իմ սիրելի Մինայի գերեզմանը: Միթէ պիտի բաժանուեմ այն տեղից, ուր իմ կեանքի բոլոր, ամեն երջանիկ յիշողութիւններն են պահուած: — Եւ դու, վայր գերեզմանիս, որի մասին յաճախ ջերմեռանդութեամբ և արցունքով եմ յիշել, որ կեանքիս բոլոր վշտերն ու ուրախութիւնները պէտք է հանգչէին, ուր ես յոյս ունէի մահիցս յետոյ դեռ տարուբեր ուել երջանիկ անցեալի յիշողութեան մէջ, քեզանից էլ պէտք է արտաքսուիմ: — Արտաքսուել, դու անզգայ ես, փառք Աստուծոյ, որ քո ուղեղի մէջ դատարկութիւն է տիրում, որ դու չես կարող հասկանալ, թէ ինչ է նշանակում արտաքսուել, այլապէս կը խելագարուէիր: Այժմ ... օ՛, դուրիս պատոյտ է գալիս: Մնաք բարով. — Մնաք բարով, այլևս երբէք չտեսնել: Մահու սև հայեացք է երևում այդ զգացմունքի մէջ —



Չտեսնել նորից—գնա, Ստեղա. գնա (նա վերցնում է պատկերը) ես քեզ պէտք է թողնեմ այստեղ (վերցնում է մի դանակ եւ սկսում է մեխերը հանել) օ՛հ, երանի թէ ես մտածողութիւն չունենայի, մեռնէի մի խուլ անզգայ մահով: Այդպէս է և այդպէս էլ պէտք է լինի... Թշուառ ես դու (պատկերը լուսնեակին դարձնելով) Ո՛հ, Փերնանդոնանդօ, երբ դու ինձ մտանում էիր, ու իմ սիրտը քեզ դիմաւորում էր, զգում էիր դու այն ժամանակ իմ վստահութիւնը քո հաւատարմութեան և բարութեան փոխարէն: Միթէ չէիր զգում, թէ սիրտս քո առաջ բաց անելով, որպիսի սրբութիւն էի քեզ յանձնում: Եւ դու յետ չէիր դառնում, չէիր խուսափում, չէիր փախչում: Կարող էիր իմ անմեղութիւնը, իմ բախտն ու կեանքը անհողութեամբ թերաթափ անել և ճանապարհին անմտաբար ցրուել—Ազնիւ, հա՛, արդարասէր—Ա՛խ, իմ մանկութիւն, իմ սակի օրեր: Եւ դու կարող ես այդքան նենգութիւններ քո սրտի մէջ տանել—Քո կինը, քո աղջիկը—Իսկ իմ հոգին այնպէս ազատ, այնպէս մաքուր էր, ինչպէս դարնան առաւօտ: Ամեն բան ինձ համար յոյս էր—Ուր ես, Ստեղա (պատկերին նայելով)

այդքան մեծ, այդքան փայփայիչ—այդ հայեացքն էր, որ ինձ կորստի մատնեց: Ստում եմ քեզ, գնա՛, կորէր այստեղից— Այդպէս սիրուն, այդքան սիրելի... Ո՛չ, ո՛չ —կորցնող ինձ, ... դ՞ու ... ինձ (ուզում է դանակով պատկերը կտրատել) Փերնանդօ, (յետ է դառնում, դանակն ընկնում է ձեռից եւ արտասուայորդ աչերով ցած է ընկնում) Ստեղա, ամենասիրելիս ... Ի դուր, Ի դուր ...

Ծառան. (զալիս է) Տիրուհի, Չեր հրամանի համաձայն ձիերը այդու դռների մօտ են. իրեղէններն արդէն կապտաուած են. փողը չմոռանաք:

Ստեղա. Վեր առ այս պատկերը (ծառան վերցնում դանակը, քանդում է շրջանակը եւ պատկերը զլանածու ծալում է) Այդտեղ է ահա փողը:

Ծառան. Բայց ինչո՞ւ ...

Ստեղա. (մի վարկեան լուռ այս ու այն կողմը նայելով) Արի (դուրս է գնում):





Դ. Ա. Հ. Լ. Ի Ճ

Ֆերմանդոս (մեհակ)

Թող ինձ, թող, վահ, սոսկալի յուսա-  
հատութիւնը նորից տիրում է ինձ: Ամեն  
բան ինձ սառն զարհուրելի է երևում. կար-  
ծես աշխարհը գոյութիւն չունի այլևս. բայց  
ես դրա մէջ ինչով եմ մեղաւոր: Իսկ նա—  
բայց մի՞թէ ես նրանից դժբախտ չեմ. ինչ  
էք պահանջում ինձանից. սակայն ինչ կը  
լինի սրա վերջը: Ինչեր ասես չմտածեցի:  
Բայց քանի մարդ մտածում է, այնքան  
տանջում, այնքան սարսափում է (Ճակա-  
տը բռնելով) Սրա եւքն ինչ է լինելու. ան-  
ցեալն ու ապագան միատեսակ սոսկալի են.  
ոչ մի կողմից օգնութիւն, ոչ մի խորհուրդ:  
Իսկ այս երկուսը, աշխարհի այս երեք կա-  
նացի ամենալաւ արարածները—նորա թշուառ  
են իմ պատճառով, թշուառ են առանց  
ինձ, իսկ, ան, ինձ հետ աւելի թշուառ:  
Օ, եթէ կարողանայի բողոքել, կարողանայի  
յուսահատուել, ներողութիւն խնդրել և  
խաբուսիկ յոյսերով գոնէ մի ժամ նրա  
ոտների առաջ ընկնել և թշուառութեանը

մասնակցելով վայելել այդ երջանկութիւնը:  
—Ո՞ւր են նորա Ստեղա—դու երեսիդ վրայ  
ընկած մեռնելով երկինք ես նայում և հա-  
ռաչում. «ես, ծաղիկս ինչով եմ մեղաւոր,  
որ դու բոլոր զայրոյթդ իմ վրայ թափեցիր,  
ինչով եմ մեղաւոր ես, խեղճս, որ այս չա-  
բագործին գլխիս կապեցիր»:—Յիցիլիէ—ա-  
մուսինս, սհ, իմ կինս ... Թշուառութիւն,  
թշուառութիւն, խորին թշուառութիւն: Ի՞նչ  
պիսի երանութիւններ են միացել իրար հետ  
ինձ թշուառացնելու համար: Ամուսին, հայր,  
սիրահար ... Այդ կանացի ամենալաւ ա-  
րարածները քոնն են ... Քոնը, կարող ես ըմ-  
բռնել այդ եռակի անասելի երանութիւնը:  
Իսկ է, որ քեզ այդպէս չարչարում, այդ-  
պէս տանջում է. նոցանից իւրաքանչիւրն էլ  
իրանն է համարում, իսկ ես ... Նա կը  
թշուառանայ. Ստեղա, թշուառ ես, ինչից  
զրկուեցար դու.—ես քեզ զրկեցի քո մա-  
տաղ կեանքի գիտակցութիւնից, Ստեղա—  
նը ես այդպէս սառնասիրա եմ (սեղանի  
վրայից վերցնում է ատրճանակը): Յամենայն  
դէպս պէտք կը գայ (լցնում է ատրճա-  
նակը):



Մտնում է Յիցիլիէն:

Յիցիլիէ. Սիրելիս, ինչ ես անում  
(տեսնում է ատրճանակը) Ուրեմն բոլորո-  
վին պատրաստ ես ճանապարհ ընկնելու  
(Փերնանդոն ատրճանակը վայր է դնում:)  
Սիրելիս, դու արդէն հանգստացած ես երե-  
ւում. կարո՞ղ եմ մի քիչ խօսակցել քեզ հետ..

Ճերն. Ինչ ես ուզում Յիցիլիէ, ինչ կայ  
ամուսինս:

Յիցիլիէ. Այդպէս մի անուանէ ինձ,  
մինչև վերջացնեմ ասելիքս. բաւական չը-  
փոթուած ենք այժմ. հօ մի ելք լինելու է  
վերջապէս այս դրութեանը. ես շատ տան-  
ջուեցայ, շատ չարչարուեցայ. սակայն բռնի  
որոշումների մասին ոչ մի խօսք, լսում ես  
ինձ, Փերնանդո:

Ճերն. Այո, լսում եմ.

Յիցիլիէ. Ես մի թշուառ վշտալի կին  
եմ, բայց իմ վճիռը սրտիս մէջ է, Փերնան-  
դո: Ես վճուել եմ... ես քեզ թողնում եմ.

Ճերն. (հեղանկով). Այդպէս կարճ ու  
լուրջ.

Յից. Ես քեզ ոչ մի բանի համար չեմ  
վատաբանի. Եւ մի էլ կարծիր, թէ մեծ

զոհողութիւն եմ անում քեզ համար: Մին-  
չև այժմ ես ողբում էի քո կորուստը, ես  
հալւում, մաշւում էի այն բանի համար, որը  
չէի կարող փոխել: Ես քեզ դարձեալ դտայ-  
քո ներկայութիւնը նոր կեանք, նոր կեն-  
դանութիւն ներշնչեց ինձ: Փերնանդո, ես  
զգում եմ, որ իմ սէրը քեզ չի բաւակա-  
նացնում, չի կարող հաւասարուել սիրահարի  
բուռն կրքերին, որ ամեն բան կը տայ,  
միայն թէ տէր դառնայ իւր սիրոյ առար-  
կային: Փերնանդո, սիրաս լի է ջերմ ու  
բուռն զգացմունքով և սուրբ սիրով դէպի  
քո անձը. սա մի ամուսնու զգացմունք է,  
որ սիրուց դրդուած զոհում է իրան հէնց  
այդ սիրուն:

Ճերն. Երբէք, երբէք,

Յիցիլիէ. Զայրանում ես.

Ճերն. Ինձ տանջում ես դու.

Յից. Դու պէտք է բախտաւոր լինես.  
Ես մի աղջիկ և յանձին քո մի բարեկամ  
ունեմ: Մենք կը հեռանանք առանց քեզա-  
նից բաժանուելու. ես քեզանից հեռու  
պէտք է ապրեմ և մնամ իբրև քո բախտա-  
ւորութեան վկայ: Ես կամենում եմ քո հա-  
ւատարմատարը լինել. դու պիտի քո ու-  
բախտութիւններն ու վշտերն իմ կրծքիս վրայ



թափեա. քո նամակները պէտք է իմ միակ  
կենդանութիւնը լինեն, իսկ իմոնքը քեզ  
համար իբրև մի սիրելի այցելութիւն: Եւ  
այդպէս դու իմը կը մնաս և ստիպուած չես  
լինի քաշ գալ երկրի խուլ անկիւնները.  
մենք բոլորս էլ կը սիրենք միմեանց. լաւ  
չեմ ասում Պերնանդօ, դէհ, ինչան համա-  
ձայնութեան տուր քո ձեռք:

Քերն. Եթէ հանաք է,— սարսափելի է.  
Եթէ լուրջ՝ անհասկանալի: Ինչ ես ու-  
զում սիրելիս, սառն դատողութիւնը չի կա-  
րող այս հանդոյցը քանդել: Քո խօսքերը  
չատ լաւ են հնչում, շատ բան են խոստա-  
նում: Ով չի զգայ, որ ասածիդ մէջ շատ  
անտեսանելի բաներ կան թագնուած, որ  
դու ինքդ քեզ խաբում ես, տանջանքներդ  
ու զգացմունքներդ առ վայր մի կեղծ մտա-  
ծին մխիթարութեամբ լռեցնելով: Ոչ Յիցի-  
լիէ, ամուսինս, ոչ, դու իմն ես, ես քոնը կը  
մնամ: Թօսքերն ու հարցերն այստեղ անօ-  
գուտ են, որովհետև խաբէութիւն են... ես  
քոնը կը մնամ... կամ...:

Յից. Հապա Ստեյլան (Պերնանդօն ներ-  
քուստ կատաղած յետ ու առաջ է գնում):  
Ո՞վ է իրան խաբում, ո՞վ է խրացնում իւր  
վշտերը սառն անզգայ, անմիտ և վաղան-

ցուկ մխիթարութեամբ, հն, անգամարդիկդ  
միշտ այդպէս էք...

Քերն. Մի պարծենայ քո սառնասրտու-  
թեամբ, Ստեյլա... Նա թշուառ է. նա իւր  
կեանքը ինձանից ու քեզանից հեռու պէտք  
է ողբայ. թող այդպէս լինի...

Յից. Ես կարծում եմ, որ եթէ մենա-  
կութեան մէջ նրա փափուկ սիրտը մեզ  
միացած տեսնի դարձեալ, իրան պէտք է  
դառն կշտամբանքներ կարգայ, նա ինձ  
թշուառի տեղ կը դնէ, եթէ ես քեզ թող-  
նեմ կամ քեզ մօտ մնամ: Որովհետև նա  
ինձ դատում է ըստ իւր հայեցողութեան:  
Այդ հրեշտակը չի կարողանայ հանգիստ  
ապրել, նա չի կարողանայ սիրել, եթէ նա  
զգայ, որ իւր բախտն աւարի է մատնուել.  
Նրա համար աւելի լաւ է...

Քերն. Թող նա գնայ, թող վանք մըտ-  
նի...

Յից. Սակայն ինչո՞ւ ես այդպէս մը-  
տածում. ինչո՞ւ պէտք է նա փակուի պա-  
տերի մէջ. ինչո՞վ է նա մեղաւոր, որ իւր  
կեանքի ծաղիկ տարիները, աճող յոյսը անց  
կացնէ մենակ, ախուր վանքում— յուսա-  
հատաբար կորուստը ողբալով: Ինչո՞ւ նա  
բաժանուի նրանից, որ այդպէս բորբոք սի-



բում է, նրանից, որ նրա ... մերնանդօ, այն-  
պէս չէ, դու նրան սիրում ես:

Քերն. Ի՞նչ ես ուզում ասել. չլինի թէ  
դու մի չար հոգի ես իմ կնոջ կերպարան-  
քով. ի՞նչ ես սիրոս տակն ու վրայ անում,  
ինչո՞ւ ես պատառում արդէն պատառուա-  
ծը. մի՞թէ ես արդէն բաւական խորտակ-  
ուած, թշուառացած չեմ... Թող ինձ, թող  
ինձ բախտին և Աստուած թող ողորմի ձեզ  
(Թուլացած ընկնում է մի բազկաթոռի վրայ):

Յից. (Մօտենում է նրան եւ ձեռնից  
բռնում) Երբեմն ապրում էր մի կոմս (Փեր-  
նանդօն կամենում է վեր ցատկել, բայց նա  
թոյլ չի տալիս) մի գերմանացի կոմս: Պար-  
տաւորութեան համետ զգացումը նրան  
բաժանեց իւր ամուսնուց ու կալուածքից  
և քչեց դէպի սուրբ տեղերը, դէպի Պա-  
ղեստին:

Քերն. Ո՛հ...

Յից. Նա մի արդար մարդ էր. սիրում  
էր իւր կնոջը. հրաժեշտ տալով նրան, տնա-  
կան կառավարութիւնը նրան յանձնեց,  
գրկախառնուեց նրա հետ և հեռացաւ: Ան-  
ցաւ նա շատ երկիրներով, կուռեց ու գերի  
բռնուեցաւ: Իւր տիրոջ աղջիկը գլխաց խեղճ  
բանտարկեալին, քանդեց նրա շղթաները և

միտսին վախան: Աղջիկն առաջնորդեց նրան  
ամենայն տեսակ վտանգների միջով, նա  
կոմսի սիրելի զինակիցն էր: Վերջապէս պը-  
սակուած յալթութեամբ կոմսը վերագար-  
ձաւ հայրենիք իւր ազնիւ կնոջ մօտ, իսկ  
այն աղջիկը — կոմսը մարդասէր էր և մարդ-  
կանց վրայ վստահութիւն ունէր — նա աղջ-  
կանն էլ իւր հետ վերցրեց: Իսկ նրա կինը  
դուրս է գալիս ամուսնուն դիմաւորելու,  
իւր հաւատարմութիւնն և վստահութիւնը,  
իւր յոյսերն ու երազները վերջապէս պսա-  
կուած է տեսնում նրա բազուկների մէջ:  
Կոմսի ասպետները հպարտ հպարտ արշա-  
ւում են դէպ հայրենի երկիր. նորա ծա-  
ռաները բեռնաթափելով աւարը տանում,  
տիրուհու ստների առաջ են դնում, որն  
արդէն այն մտքին է, թէ որքան կարելի է  
լաւ զարդարէ գլեակը ամուսնուն ընդունե-  
լու և իւր ուրախութիւնը կրկնապատկելու  
համար: Ազնիւ կին, քեզ համար ամենա-  
մեծ գանձը յետոյ պէտք է գայ դեռ: Այն  
ո՞վ է, որ շքախմբի մէջ քողով ծածկուած մօ-  
տենում է. հանդարտ ու համեստ իջաւ նա  
ձիուց: «Ահա, բացականչում է կոմսը, նրա  
ձեռից բռնելով և ներկայացնելով իւր կը-  
նոջը, ահա նա, որի ձեռից դու ստանում



ես այս բոլորը, նոյն իսկ ինձ: Նա էր, որ իմ վրի շղթաները կտրեց, փոթորիկներից ազատեց և իմ սիրտը դրաւեց. նա ինձ ծառայելով պահպանեց ամեն վտանգներից: Այս ամենի փոխարէն ինչով վարձատրեմ նրան. նա քո առաջն է, գոհացրու նրան» (Փերնանդոն հեկեկալով ծածկում է երեսը ձեռներով եւ սեղանի վրայ է դնում գլուխը): Հաւատարիմ կինը ընկնելով նրա վզին գոչում է արտասուելից. «Ա՛ռ ամեն բան, ինչ որ ես կարող եմ տալ քեզ. վերցրու նրա կէսը, որ իրաւամբ ամբողջապէս քեզ է պատկանում. վերցրու ամբողջը, բայց և ամբողջը ինձ թող: Մեզանից իւրաքանչիւրը թող նրան իրը համարի, առանց մէկս միւսից յափշտակելու»:— «Արդ—գոչեց նա ընկնելով նրա ոտքերը—մենք քոնն ենք» նորա բռնեցին կոմսի ձեռը և սիրով ապրեցին այնուհետև: Աստուած, տեսնելով այդպիսի սէր, ուրախացաւ երկնքում և Նորա սրբազան փոխանորդը օրհնեց նոցա բախտը: Նոցա սէրն ու բախտաւորութիւնն երկար շարունակուեցաւ միևնոյն երանական ընակարանում և վերջապէս մի ընդհանուր գերեզմանում:

Քերն. Աստուած իմ, յուսոյ որպիսի

ճառագայթ է թափանցում իմ մէջ: Ցից. Նա այն տեղ է, նա մերն է (մտնենալով առանձնատնեսրակի դրան) Ստեյլա. Քերն. Թող նրան, թող ինձ (ուզում է գնալ)

Ցից. Լսիր ինձ, սպասիր... Քերն. Քո խօսքերը բաւական են. ինչ որ լինելու է, կը լինի. թող ինձ: Այս բոսպէիս ես դեռ պատրաստուած չեմ ձեր երկուսի առաջ դուրս գալու միանգամից (Գնում է):

Ցիցիլիէ. Խեղճ, միշտ հակառակ է ընկերական խորհուրդներ և միջոցներ ընդունելու: Ստեյլան էլ այդպէս է: Բայց ինձ կը յաջողուի. (մտնեսալով դրանք) Ստեյլա, լսիր ինձ, Ստեյլա:

Մտնում է Լուցիէն, ապա Ստեյլան.

Լուցիէ. Մի կանչի նրան, նա հանգստանում է, գոնէ մի վարկեան մոռանալու իւր ծանր վիշտը. նա շատ է տանջւում, մայրիկ, ես վախենում եմ, որ նա մի ինչ որ գաղտնի դիտաւորութիւն ունի: Ես վախենում եմ, մի գուցէ նա մեռնի... Ցից. Ի՞նչ ես ասում.



Լուցիէ. Ինձ թուում է, թէ նրա ըն-  
գունածը դեղ չէր:

Յից. Միթէ ես ի զուր էի յուսացել-  
՞, երանի թէ սխալ լինէր քո ասածը. սար-  
սափելի է, սարսափելի:

Սեյլա. (դրան յետեւից) Ո՞վ է կան-  
չում, ինչո՞ւ էք զարթեցնում ինձ այդպէս  
վաղ, ժամը քանիսն է.

Լուցիէ. Վաղ չէ, արդէն երեկոյ է:

Սեյլա. Շատ լաւ, շատ ճիշտ ես ասում-  
ինձ համար երեկոյ է:

Յից. Եւ դու մեզ այդպէս խարճում ես:

Սեյլա. Դու ես քեզ խարճում:

Յից ես վերադարձներով քեզ կրկին,  
յոյս ունէի ....

Սեյլա. Ինձ համար այժմ հաստատ  
բան չկայ:

Յից. Ա՛խ, եթէ կարողանայի քեզ  
դուրս կորզել այստեղից և տանել, ման գալ  
քեզ հետ մինչև աշխարհի ծայրը:

Սեյլա. Հասել է իմ վերջը.

Յից. (Լուցիէին, որ վախեցած այս ու  
այն կողմն է գնում,) Ինչ ես սպասում,  
դնա, օգնութիւն կանչիր:

Սեյլա. (ըննելով Լուցիէին) Ոչ, կաց  
(յննուելով երկուսի վրայ մի քիչ առաջ է

գալիս) ես մտածում էի ձեր բազուկների  
վրայ իմ կեանքի շունչը վշել, առաջնորդե-  
ցէք ուրեմն ինձ դէպի գերեզման (Շոքա  
դուրս են բերում նրան հանդարտ կերպով  
եւ աջ կողմում մի քաղկաթոռի վրայ նըս-  
տեցնում):

Յից. Լուցիէ, դնա, օգնութիւն, օգ-  
նութիւն, շուտ.

(Լուցիէն գնում է.)

Սեյլա. Ինձ օգնութիւն հարկաւոր չէ:  
ցից. Ո՛հ, ինչպէս ուրիշ տեսակ էի  
մտածում, ուրիշ բան յուսում:

Սեյլա. Դ՛ու, իմ բարի, բարեսիրտ համ-  
բերող ու յուսացողս:

Յից. Ինչ սարսափելի վիճակ.

Սեյլա. Բախտը մեզ խօր վերքեր է  
տալիս, որ յաճախ բժշկելի են լինում, իսկ  
այն վերքերը, որ մի սիրտ ուրիշ սրտի կամ  
հէնց իրան է հասցնում, անբժկելի են—  
եւ ուրեմն թող մեռնեմ:

Մտնում է Ֆերնանդօս.

Ֆերն. Արդեօք չի սխալուի Լուցիէն.  
նրա լուրը ճշմարիտ է: Տայ Աստուած, որ  
դա սխալ լինի, եթէ ոչ Յիցիլէ, եւ կա-



նիծեմ քո մեծահոգութիւնն էլ, քո դան-  
դաղկոտութիւնն էլ:

Յից. Իմ սիրտն ինձ չի յանդիմանում.  
ազատ կամբը չի մեղադրում ոչ մի հետե-  
ւանք: Շտապիր ազատելու, նա դեռ ապ-  
րում է. նա դեռ մերն է ...

Ստեյլա. (որ նայում եւ Փերնանդոյի ձե-  
ռը ըննում է) Բարով ես եկել. տուր քո  
ձեռը (Յիցիկէին) իսկ դու քոնը: «Ամեն ինչ  
սիրոյ համար» սա իմ կեանքի նշանաբանն  
էր: Ամեն ինչ սիրոյ համար, նոյն իսկ  
մահը: Ամենաերջանիկ վարկեանում մենք  
լուծւում էինք և իրար հասկանում (աշխա-  
տում է երկու ամուսինների ձեռները իրար  
միացնել) թողէք, որ այժմ ես լուծւում և  
հանդչեմ (նա յենում է սեղանի վրայ դը-  
րած ձեռին):

Քերն. Այո, Ստեյլա, մենք պէտք է  
լուծուք ու հանդչենք (դանդաղ կերպով սե-  
ղանի վրայ շարժումներ է անում):

Յից. (անհամբեր շարժումներով) Լու-  
ցիէն չեկաւ, ոչ ոք չի գալիս, ինչ է, անա-  
պատ է դարձել այս տունը, ո՛ր են կորել  
դրացիները: Քաջացիր, Փերնանդո, նա դեռ  
ապրում է: Հարիւրաւոր մարդիկ մահուան  
անկողնից վեր են կացել, նոյն իսկ գերեզ-

մանի դռնից յետ են դառել: Փերնանդո,  
նա դեռ կենդանի է և եթէ բոլորը մեզ  
թողնէին և ոչ մի բժիշկ չգար, ոչ մի դեղ  
ու դարման չլինէր, սակայն երկնքում կայ  
մէկը, որ մեզ կը լսէ (Ստեյլայի առաջ ծունգ  
չոգելով) լսիր մեզ, Աստուած, նրան պահիր  
մեզ համար, ազատիր մահուանից:

Քերն. (Վերցնելով ատրճանակը, հան-  
գիստ հեռանում է):

Յից. (Առաջուայ նման Ստեյլայի ձախ  
ձեռը ըննելով) Այո, նա դեռ ապրում է.  
նրա ձեռը, նրա քնքոյշ թաթիկը դեռ տաք  
է: Ես քեզ չեմ թողնի. ես քեզ կը պահեմ  
իմ սիրոյ և հաւատի ամբողջ ոյժով. ոչ,  
սա ցնորք չէ. չերմեռանդ աղօթքը աւելի  
կը զօրացնէ, քան երկրաւոր օգնութիւնը  
(վեր կենալով յետ է նայում): Նա գնաց—  
լուռ ու անոյցս ... Ո՛ւր ... Ա՛խ, միայն թէ  
նա այնպիսի մի քայլ չանէր, որ իւր ամ-  
բողջ աղմկալից կեանքը միանգամից խոր-  
տակուէր: Նրա մօտ ... (կամենում է գնալ,  
բայց դառնում է դէպի Ստեյլան) Եւ սրան  
այսպէս անօգնական այստեղ թողնեմ: Ողոր-  
մած Աստուած, այս սարսափելի բոպէին  
կանգնած եմ այստեղ երկուսի մէջտեղը,  
օրօնց ոչ միացնել կարող եմ և ոչ բաժանել:



Լսում եւ ասեանալի որոք.

Յից. Աստուած իմ (կամենում է այն  
կողմը գնալ)

Ասելլա. (Ձանալով ուղղութիւն) Այդ ինչ  
բան էր, Յիցիլիէ. մօտեցիր, ինձ մի թողնէ.  
ինչո՞ւ այդպէս հեռու ես ինձանից. ես վա-  
խենում եմ, սարսափում եմ: Ես տեսնում  
եմ, որ արիւն է թափւում. դա իմ արիւնն  
է, միթէ դա իմը չէ: Ես վիրաւորուած չեմ,  
բայց մահու հիւանդ եմ: Սակայն դա իմ  
արիւնն է:

Մտնում եւ Լուցիէն

Լուցիէ. Օգնութիւն, մայրիկ, օգնու-  
թիւն.. Ես կը շտապեմ օգնութեան, բժշկի.  
դու ես մարդ ուղարկիր. սակայն սխա-  
ղիւ թէ մի բան օգնէ. հայրս մեռնում է  
իւր սեփական ձեռով. նա ընկած է արեան  
մէջ (Յիցիլիէն կամենում է գնալ, բայց Լու-  
ցիէն բռնում է նրան) Ոչ, մայրիկ, մի գնա..  
բանը բանից անցել է արդէն և տեսարանը  
իրստ յուսահատական է:

Ասելլա. (որ կէս ուղղուած լսել էր ու-

շարունթեամբ, բռնում է Յիցիլիէի ձեռը)  
Կատարուեցաւ ուրեմն (ուզում է յենուել  
Յիցիլիէի եւ Լուցիէի վրայ) Գնանք, ես դար-  
ձեալ ինձ լաւ եմ զգում. գնանք նրա մօտ.  
Թող ես այնտեղ մեռնեմ:

Յից. Դու տատանւում ես. քո ստերը  
չեն հնազանդում քեզ, մենք եւ չենք կա-  
րող տանել. ես ամբողջովին դողում եմ:

Ասելլա. (ընկնում է ըստկաթոռի վրայ)  
Ուրեմն ի նպատակ, ուրեմն գնա նրա մօտ,  
որին պատկանում ես. ընդունիր նրա վեր-  
ջին հառաչն ու լսիր մահավերջի խորտանքը:  
Նա քո ամուսինն է. դու յապաղում ես:  
Ես խնդրում եմ, թախանձում եմ. քո  
այստեղ մնալն ինձ անհանգստացնում է  
(Թոյլ շարժումներով) Մտածիր, նա մեռակ  
է, գնա...

Յիցիլիէն շտապով դուրս ե գնում,

Լուցիէ. Ես քեզ չեմ թողնի, քո մօտ  
կը մնամ:

Ասելլա. Ո՛չ, Լուցիէ, եթէ դու ինձ բա-  
րեք ես ցանկանում, գնա, շտապիր նրա  
մօտ. Թող ես հանգչեմ: Սիրոյ թեւերն ան-  
զօրացած են, նորա ինձ այլևս չեն կարող





նրա մօտ թուցնել: Դու երիտասարդ ե ա-  
ռողջ ես: Թող պարտականութիւնը այնտեղ  
դորժէ, ուր սէրը համր է: Շտապիր նրա  
մօտ, որին դու պատկանում ես. նա քո  
հայրն է: Դիտես ինչ է նշանակում այդ-  
դնա, եթէ ինձ սիրում ես, եթէ ցանկա-  
նում ես, որ ես հանգստանամ:

Լուցիկն դանդաղ հեռանում է.

Սեղա. (ընկնելով) Եւ ես մեռնում եմ  
մենակ:





«Ազգային գրադարան»



NL0167099



83 -

7-86